№ 1 (13 ԺԷ ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1903

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1902-1903

Տարին սահեց հայրենիքի վրայից, առանց շոշափելի մի հետք թողնելու։ Հայի վիճակը ընդհանուր առմամբ մնաց անփոփոխ, ոչ աւելի ծանր, ոչ աւելի թեթև, — մէկն էր սովորական „նորմալ" տարիներից։

Հալածանքները դադար չառան։ Եալդըզի դժոխային մթնոլորտում ենթակայ մշանջենական ահ ու սարսափի, իր սեփական տուներից անգամ զարկանդող Մանիակը գիշեր ու ցերեկ աշխատանքի վրայ էր. նա մի վայրկեան անգամ չէր մոռանում հայ ժողովրդին և շարունակ խորհում էր միջոցներ, մշակում էր հոյակապ ծրագիրներ՝ այդ ժողովուրդը իսպառ „խաղաղացնելու"... Թալանի և սպանութեան միևնոյն քաղաքականութիւնը կապարի նման ծանրացած էր Մեծ ու Փոքր Հայաստանի վրայ։ Արտասահմանեան հայ և օտար թերթերի մէջ հրատարակուած թղթակցութիւնները ի ցոյց են բերում այդ քաղաքականութեան աղէտաբեր արդիւնքները, որի էական ձգտումն էր՝ ոչնչացնել նախ ըմբոստ տարրը Հայի հայրենիքում և ապա առհասարակ ջնջել հայութիւնը։

„Նորմալ" վիճակը մի վայրկեան սպառնաց փոթորիկ ծնել... Ընթերցողը յիշում է Սասունի և ամբողջ Տարօնի տագնապը և յեղափոխական կազմակերպութեան ահկոծնակը վերահաս աղետների դիմաց։ Աշոյ դաշտը լցուել էր քրդերով ու չէրքէզներով. մի քանի աշիրէթներ կանոնաւոր զօրքի հետ պաշարել էին Սասունը... Բանի՞ երրորդ անգամն էր արդէն... Բայց այն անգամւայ փորձը թուում էր եղերական։ բոլոր պատրաստութիւնները խնամքով տեսնուած էին կառավարութեան կողմից. ոչ մի կասկած չկար, որ դահիճը յղացել էր ջարդի մեծ ծրագիր և Տարօնի առիւծները, որոնք այնքան յաճախ դիմադրել էին թշնամու գրոհին, կանգնած էին թերևս անխուսափելի՞ և վերջնական կորստեան առջև... Բոպէն կրիտիկական էր։ Երկրի ընկերներից հրահանգուած՝ Արևմտեան Բիւրօն ձեռնարկեց մի շարք դիմումներ՝ հարուածը կանխելու համար։ Ֆրանսիացի մեր բարեկամները, ինչպէս միշտ, այս անգամ ևս սիրով արձագանք տուին և գիտակցելով վտանգի ծանրութիւնը՝ շտապեցին մինիստրի մօտ, ոչնչ չը դադարեցրեց ուշադրութիւնը և պէտք եղած դիմումները։ Շատ չանցաւ և ծանուցուեց Ֆրանսիական գործակալի ճանապարհելը դէպի Մուշ-Սասունի շրջանը, ուսկից նա պիտի տեղեկագրէր իր կառավարութեանը կատարուող խժդժութիւնների մասին։ Ֆրանսիայի օրինակին հետևեցին Անգլիան և Ռուսաստանը։ Մինիստր Դելկասէ որոշեց, բացի այդ, հաստատել Վանի մէջ ֆրանսիական մնայուն փոխ-հիւպատոսութիւն։

Մեր վեհանձն բարեկամներին ենք պարտ, ապա անշուշտ, նաև Դելկասէի նախաձեռնութեան, որ ջարդի կոշմարը գէթ առժամապէս անհետացաւ Սասնոյ հորիզոնից։

Մխիթարական մի ուրիշ փաստ է՝ անցեալ տարւայ յուլիսին գումարուած Բրիւսէլի հաւաժողովը, որը մի փորձ էր՝ ամբողջացնելու հայասէր պրոպագանդը արևմտեան Եւրոպայում։ Դա միաժամանակ առաջին միջազգային կոնգրէսն էր, ուր աշխարհի ազգերի ներկայացուցիչներ — թւով մօտ 150—խորհրդակցում էին մի ճնշուած ժողովրդի դրութեան և նրան դարմանելու միջոցների մասին։

Հայասէր շարժումը տարածւում է զգալի կերպով, հայի և Հայաստանի մասին լսւում են այսօր հեղինակաւոր ձայներ, կազմւում են հրապարակային ատենախօսութիւններ նոյնիսկ այնպիսի վայրերում, ուր մինչև օրս բնաւ չեն հետաքրքրուել այդ կարգի խնդիրներով։ Մեր բոլոր սկեպտութեամբ հանդերձ դէպի „դրսի պրոպագանդի" զօրաւորութիւնը՝ պիտի խոստովանենք սակայն, որ այդ պրոպագանդը որոշ չափով հասնում է իր նպատակին։ Եթէ նա անզօր է շատ թէ քիչ արմատական լուծում տալու մեր խնդրին, գէթ աջողում է սանձել Գազանի բնազդումները, գէթ կնդրկանում է կանխել նորանոր արիւնհեղութիւնները։ Նախորդ տարւայ տագնապը և համեմատաբար բարեբաստիկ վախճանը մի նոր ապացոյց է այդ իրողութեան։

Մխիթարական մի երրորդ փաստ ենք յիշատակելու տարւայ անցքերի այս համառօտ հաշուէկշռի մէջ — դա յեղափոխական տրամադրութեան աճումն է Հայրենիքում և արտասահմանում։ Այդտեղ է մեր յոյսը, և մեր խրախոյսը։ Չենք վարանում կրկնել — թէկուզ լինի դա հազարուսներորդ անգամը — որ այդ փաստի մէջն է մեր յաղթանակի միակ գրաւականը։ Մի վայրկեան անգամ չպէտք է մոռանանք, որ հայրենիքը, նոյնիսկ „ամենախաղաղ" և „ամենանորմալ" պայմանների մէջ մի փրկական դժոխք է, ուր Սադոյէլը հայկական թարմ արեան միշտ ծարաւի՝ անխոնջ դաւեր է նիւթում իր

վերաւոր, բայց անպարտելի զոհի դէմ, ուր ազատ ու համարձակ վխտում են մարդասիրական բարեհիները, ուր միլիոնաւոր ժողովուրդը կոտորւում է հարկահաւաքներից և հարիւրաւոր ուրիշ տգրուկներից, կոտորւում է սովից ու ցրտից, կոտորւում է, սպառւում է...

Լաւ գիտակցենք այդ, հայեր, ժամանակն է, գերագոյն ժամանակը։ Եւ չ'օրօրենք մեզ սին ու պատիր յոյսերով, „իրաւաղ պրոպագանդի“, „կուլտուրական պայքարի“ ցնորական ակնկալութիւններով։ Պատրաստենք այդ կոտորւող ժողովրդին, տանք նրան միջոց ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ե ա ն, հոգանք, որ նա զինւի ու կազմակերպւի, որ կարողանայ պատւով դիմաւորել գալոց անխուսափելի փոթորիկներին։

Ապա թէ ոչ... մենք դեռ շատ անգամ ականատես կը լինենք — ա՛ի հայկական ստրկամտութիւն — ցաւով ու սարսռւռով ականատես կը լինենք, թէ ինչպէս հպարտաւոր հայաստանցիներ կ'ընկնեն ամենաանպատիւ, ամօթալի մահով, առանց դիմադրելու, առանց դիմադրութեան միջոց ունենալու։

— Ինչո՞ւ հայերը իրենք էլ չեն սպանւում, կամ գէթ չեն դիմադրում,— հարցնում է աւստրիացի հրապարակախօսը, հարցնում է ունգարացի պատգամաւորը։

— Զեն դիմադրում, որովհետև զէնք չունեն։

— Բայց ձեր հարուստները ի՞նչ են մտածում, ինչո՞ւ չեն կռւում։

Ահա բնական, տրամաբանական հարց, որ սակայն անտեղի կը թւայ մեր ժողովրդի ճակատագիրը վարել յաւակնող մի կարգ անուղեղ որոճողներին։

Այո՛, եւրոպացին ճիշդ է նկատում, մենք կըսպասենք անխուսափելի կոտորածների, որպէս զի կատարենք մեր ազգային գերագոյն պարտքը, մի քանի գրօշ բաժին հանելով նորա-նոր ուրբացած ընտանիքներին...

Այդ է մեր դառն, եղկելի իրականութիւնը։ Այդ է մեր յաւիտենական գանգատի նիւթը։ Այդ է մեր խորունկ կսկծեցուցիչ վէրքը...

Մի ողբալի երկուութիւն, մի դաժան, այլանդակ կոնտրաստ շարունակում է իշխել հայկական իրականութեան վրայ։ Մի կողմից յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն փ ո ք ր ա մ ա ս ն ո ւ թ ի ւ ն ն է, քանակով այնքան քիչ, որակով այնքան շատ, որ հայրենիքի մութ ու անհիւրընկալ խորշերում թագնւած, հպարտ իր կոչումով, գիտակ իր սրբազնագոյն պարտքի, մի չնաշխարհիկ անձնուրացութեամբ կրում է անօրինակ զրկանքներ, մղում է „ստորերկրեայ“ պրոպագանդ, խրախուսում է լքւած ժողովրդին, և միևնոյն ժամանակ միշտ սուրը ձեռին, միշտ ճակատը բաց՝ պատրաստ է դիմաւորել արեան ու աւարի ծարաւ քրդական վոհմակներին...

Միւս կողմից...

Միւս կողմից՝ հ ա յ մ ե ծ ա մ ա ս ն ո ւ թ ի ւ ն ը և ամէնից առաջ պերճանքի ու նիւթական վայելքների մէջ լողացող հայոց բ ո ւ ր ժ ո ւ ա զ ի ա ն, գձուռ, արծաթասէր, որ կարծէք երդւել է միանգամ ընդ միշտ քար ու ապառաժ մնալ մորթւողների աղեկտուր հաւաքի դիմաց... Կոնտրաստը ցայտուն է, իրողութիւնը դառն, յուսահատեցնելու չափ տխուր...

Մենք անդրդւելի ենք մեր ուղղութեան մէջ և խոչընդոտները չպիտի դիմանան մեր առջև։ Որքան մենք ընդունակ ենք սիրոյ, նոյնքան ընդունակ ենք և ատելութեան։ Որքան մենք խանդագին սիրում ենք մեր ժողովրդին, նոյնքան և ատում ենք նրա վեհ ու արիւնոտ դատի հակառակորդներին։ Մենք պիտի շարունակենք տասնեակ տարի առաջ սկսւած պայքարը և համերաշխութեան անդադրում հրաւէր կարդալով բոլոր յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն տարրերին — ինչ դրօշակի էլ պատկանեն նրանք — մենք պիտի ջանանք սուարացնել կուսողների բանակը, պիտի ջանանք մաքրել կռւի ճանապարհը այլևայլ ցեցերից, մենք պիտի հալածենք մեր թունաւոր ատելութեամբ հայ համիդականներին, բոլոր նրանց, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար սատար են լինում թշնամու դաւերին, բոլոր նրանց, որոնք յանցաւոր թեթեւամտութեամբ արհամարհում են յեղափոխականի յուսահատ կոչը. զէ՞նք, զէ՞նք այն ժողովրդին, որ „դեգերում է մասսային կոտորածի ժղձաւանջի տակ“։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

13 դեկտեմբեր 1902

Այս տարւան փետրւարի վերջերն էր որ ձեզի հաղորդած էի Ճիզրէլի ոչ-իսլամ հասարակութեանց պետերուն կողմէ կայսերական պալատն, մեծ եպարքոսին, ներքին գործոց նախարարութեան և պատրիարքարաններու ու խախամարանի տարբեր թեականներով տրւած երեք հեռագիրներէն երկուքին հարազատ թարգմանութիւնը։ Այն թեականէն իվեր ամիսներ անցած էր, այս խնդիրն ալ մոռացութեան մատնւած կ'երևէր՝ այն բարի սովորութեան համեմատ, որ մի տարւան ընթացքին մէջ այդպիսի հազարաւոր բողոքներ, հանրագրութիւններ վլոստորի վճիտ ջուրերը կ'իջնան, եթէ երբէք մինչև Պոլիս հասնելու բախտն ունենան անոնք — երբ օրին մէկը արտասահմանեան թերթերու մէջ կարդացի, ոչ նոր զարմացումով, թէ Ճիզրէլի Մըսթաֆա փաշային վրայ զինւորական ուժեր փոխադրւած ըլլալով՝ փաշային տունտեղը քարուքանդ ըրած և զինքն ալ սպանած ըլլայ։ Շեմ կրցած ընդունիլ այս լուրին ստուգութիւնը, քանի որ Մըսթաֆա փաշային կոնակը կը տեսնէի — ինչպէս որ Ճիզրէլցիք ալ հեռագրած էին — տխրահուչակ միւշիր Զէքի փաշան, չորրորդ գօրաբանակի ընդհանուր հրամանատարը, որուն ձեռքին և բացարձակ լիազօրութեանը յանձնւած է տարիներէ իվեր ամբողջ Հայաստանին և Միջագետքի մեծ մասին դժբախտ ճակատագիրները։ Ուստի հետաքրքիր եղայ խնդրին էութիւնը հասկնալու, և այսօր իրաւունքի եմ բուն իրողութիւնը յայտնել ձեզի, հիմնւելով ամենաստոյգ տեղեկութիւններու վրայ, զորս քաղած եմ վաւերական աղբիւրէ մը։ Ահա եղելութիւնը։

Կարելի չէ եղած որոշ գիտնալ թէ ճիզրէեցոց քաշած հեռագիրներուն, թէ այդ հեռագիրներուն հրապարակելուն և թէ ճիզրէեցոց կերպով մը Պոլիս ղրկելու յաջողած հանրագրութեան և կամ հրաժարեցուցած կուսակալ Խալիտ պէկին Պոլիս գալուն Դրան կամ պալատին անոր տուած բերանացի անպատասխ տեղեկութիւններուն հետևանքը Պոլսոյ ձեռնհաս պաշտօնարանը, ըսինք պալատան մէջ կ'որոշեն Մըսթաֆա փաշայի մասին եղած բողոքները քննել և այդ քննութիւնը կատարելու պաշտօնով ասկից ճամբայ կը հանեն երկու զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներ, հրահանգ տալով նոյնպէս չորրորդ բանակի հրամանատարութեան որ երկու զինուորականներ ղրկէ, որոնք միանալով Պոլսէն ղրկուածներուն, կազմեն զինուորական ատեան մը։ Ասկից և Երզնկայէն ճամբայ ելած փէրիգներ կը հասնին Տիգրանակերտ ու ատեանը կազմուած կը հռչակուի։ Բայց խնդրին ամենադժուար կէտը կը կայանայ Մըսթաֆա փաշան իր որդիէն հանելով այս ժողովին առջևը ներկայացնելու մէջ՝ եթէ ոչ զայն քննելու ու դատապարտելու գէթ գործին ձևակերպական երևոյթը ազատելու համար։ Այդ մասին ալ կը դիմեն տաճկական խորամանկութեան և համոզելով կը բերեն զինք Տիգրանակերտ ու կըսկսին քննութիւն։ Քննութեան շարունակած օրերու մէջ փաշան կը հիւրասիրուի մասնաւոր տան մը մէջ, բայց ատիկայ ալ շատ ծանր կուգայ անզուսպ փաշային և կ'ուզէ, առանց քննութեան հետևանքին սպասելու, անմիջապէս հեռանալ Հարկ կ'ըլլայ քննութիւնը կարճի կապել և մէկ շաբթուան մէջ անիկայ կը հասնի իր պատուաւոր վախճանին։ Զինուորական անաչառ (՞) ատեանը իր խորախորհուրդ նկատումներով անհիմն և անարժէք կը հռչակէ փաշայի մասին տեղացող բողոքները և անպարտութեան վճիռը կ'արտասանէ ու փաշան առօք փառօք կը վերադարձնէ ճիզրէ։

Փաշային ճիզրէ հասնելէն մինչև շանսատակ եղած օրը, այս ժամանակամիջոցին մէջ իր կատարած գաղանութիւններու վրայ հոս չպիտի ծանրանամ, միայն ուրախութեամբ պիտի արձանագրեմ այն իրողութիւնը, որ անպատուելու փորձուած հայ նորապսակ կուսի մը պատիւը պատճառ դարձած է գաղանին մահուան՝ հետաքրքրական հետևեալ պարագաներու մէջ։ Ճիզրէյի հարուստ հայ երիտասարդ մը կ'ամուսնանայ։ Փաշան պսակին կատարուած օրն իսկ լուր կը ղրկէ տղուն հօրը որ որոշած է նոր հարսին առաջին առագաստին վայելումը իրեն սեփականացնել՝ հետևաբար այն գիշեր իսկ հարսը ղրկէ իր մօտ։ Տղան փաշային լպիրշ նպատակը իմանալուն, կ'առնէ իր ամուսինը ու կը փախչի ճիզրէյէ 4 ժամ՝ հեռաւորութեամբ գիւղ մը, ուր գիւղացիք կը պահեն զինք։ Փաշան տղուն իր նորապսակ ամուսինին հետ փախնելը երբ կ'իմանայ կը բորբոքի և չորս կողմ մարդիկներ կը ղրկէ։ Գիւղացիք իրենց կողմէ նորապսակ ամուսիններուն տրուած աբանջականութեան երևան գալով փաշային վրէժխնդրութեան ենթարկուելէ վախնալով, գաղտնապէս կը փախցնեն զիրենք Սիւլէյման փաշայի սահմաններէն ներս, ուր Սիւլէյման փաշայի տղան իր պաշտպանութեանը տակը կ'առնէ զիրենք։ Սիւլէյման փաշայի տղան իմանալով ասոնց փախստեան պատճառները և Մըսթաֆա փաշային պիղծ դիտաւորութիւնը, կրակ կը կտրի և միւս կողմէ մտածելով թէ այս դրժբախտներուն իրաւուած պաշտպանութիւնը կրնայ առիթ պալ Մըսթաֆային իրեն դէմ սնուցած ատելութեան վերարծարծման և թերևս անոր կողմէ պատրաստուած մէկ յարձակումի, ատոր տեղի և ժամանակ չտալու համար, անմիջապէս կը ժողվէ իր մարդիկը և յանկարծակի յարձակում մը կատարելու դիտաւորութեամբ ճամբայ կ'ելնայ դէպի ճիզրէ։ Ճիզրէէն ներս մտած պահուն Մըսթաֆա փաշան կը նստի եղեր ամբողջովին ժողովրդի կողոպուտներով ու լաց ու կոծով շինել տուած իր հոյակապ նորաշէն պալատան պատշգամին վրա։ Աղա Սիւլէյմանի քաջ տղան երբ կը տեսնէ զայն, առանց ժամանակ կորսնցնել տալու հրացանը կ'ուղղէ անոր դէմ և 4-5 լաւ նշան առնուած գնդակներու հարուածին տակ մեծափոր փաշան կը փռէ պատշգամին տախտակամածին վրայ։ Կոիւը կը շարունակուի երկու աշիրէթներու միջև և կը վերջանայ աղա Սիւլէյմանի մարդիկներուն փառաւոր յաղթութեամբ, որոնք անդարմանելի կորուստներ կուտան Մըսթաֆա փաշայի և իր արբանեակներուն, մահ սփռելով չորս կողմ, քար ու քանդ ընելով անոնց բոյնը և ճոխ աւարով մը կը վերադառնան իրենց տեղերը։ Այս փառաւոր յաղթութեան տխուր դրուագ մը կը կազմէ Սիւլէյման փաշայի տղուն սպաննուիլը, որ իր հօրը մահէն իվեր իր աշիրէթին պետը եղած էր։ Անպատուութենէ ազատուած հայ կոյսի մը հետ ամբողջ հայութիւնը յարգանօք պիտի յիշէ անվեհեր հերոսին յիշատակը։ Ճիզրէեցիք պիտի օրհնեն միշտ յիշատակը այն քաջին, որու շնորհիւ իրենք ազատ շունչ մը կը քաշեն այսօր իրենց հայրենի հողին վրայ։

ՆԱՄԱԿ ԷՐԶՐՈՒՄԷՆ

25 Հոկտեմբեր 1902

Էրզրումից դէպի հարաւ-արևելք ընկնում է Խնուսի գայմագամութիւնը, որ հին պատմական Խնուն գաւառն է. համանուն աւանով։ Ունի 24 հայկական գիւղեր, որոնց մէջ կոտորածից յետոյ բռնել են դրել զանազան քիւրդ աղաներ իրենց մշակների և ծառաների հետ։ Բացի կառավարութեան տուած անթիւ հարկերից ու նրա պաշտօնեաների ձեռքերից քաշած տանջանքներից, հայ ժողովուրդը եռապատիկ տանջանքներ է կրում քիւրդ աղաներից։ Նրանք մի-մի անսահման տէրեր են, որոնց իւրաքանչիւր քմահաճոյքին պիտի ենթարկուի գիւղացին։ Իւրաքանչիւր գիւղ ունի մի աղա, որի բոլոր տնտեսական կարիքները ինքը պիտի հոգայ։ Ժողովուրդը իր արտերի մի որոշ մասը ցանում, հնձում, կալսում է աղայի համար, պահում է նրա տաւարը, կովը, ձին, ոչխարը և սատկածի փոխարէն պարտաւոր է ինքը վճարել։ Կան գիւղեր էլ, ինչպիսիք են Խոնատին, Մարութ, Ղարաքէօփրու, Իրնզեթը, որ կուսակալի են մի քանի աղաների մէջ և ամէնքն էլ իրենց ուղածի պէս օգտուում են գիւղացուց. այսօր մի աղա կը հրամայէ արտը հերկելու, վաղը միւսը կը պատիրէ ցորենը ջաղացը տանելու և այլն։ Բացի սովորական հարկի կերպարանք ստացած թալանից ու յափշտակութիւնից՝ միշտ անպակաս են, այսպէս կոչուած արտաքոյ կարգի թալանները։

Օգոստոսի սկիզբներին Զաուրմ գիւղից Խնուս-բերդցի Հիւբրի աղայի մարդիկը տարան Առաքելի 8 եզները։ Յունիսի վերջերին Էլփիս գիւղացի Մկրէ Աւետեանի 2

եղները և մի կովը տարան. նոյն Շիւքրիի ծառաները խլեցին և տունը, քանի օրից յետոյ անտուն մնացած խեղճին իբրև տան գին 2 ոսկի տուին, որ նրա եղների գինն անգամ չէ։ Անցեալ տարի նոյն քրդերը տարել են նրա մի մատակը իր քուռակով, երկար աղաչանքից յետոյ մատակը յետ են տուել առանց քուռակի։ Ներկայ տարուայ յունիսին տարան Հարամիկ գիւղացի Տէր Սողոմոնի մատակն ու քուռակը։ Սեպտեմբեր 25-ին օրը ցերեկով քշեցին տարան արոսցի Յարութիւն Մակարեանի 25 գառը։ Այս Շիւքրին, որ մի քանի գիւղերի աղա է, իր ծառաներով կատարեալ չարիք է տեղացիների համար։ Խնուսի Թոչոնք գիւղացի Համիդիէի գայմագամ Սէլիմ բէկի մարդիկը, գարնան Բաղքիկ գիւղից տարան Կրպոյի եղները։ Սայը գիւղից տարան 5 եզ, վերջը 2 ոսկի փրկանք ստանալով ետ տուին։ Համիդիէ քրդերը այս գիւղերում աւելի ազատ են վարուում, քան իրենց տներում. ամէն դատարկ պատրուակի համար գիւղը լեցուում է քրդերով։ Շիւքրի աղան մտքում դրել է գրաւել Հատամիկ հայ գիւղը. այդ նպատակով մայիսից մինչև այժմ Ավդըլվատ Համիդիէի բինբաշին 4 անգամ 80 ձիաւորով եկել է Էլփիս գիւղը, իբր Շիւքրուն օգնելու և մնացել է ամէն անգամ 2-4 շաբաթ։ Անկասկած է, որ գիւղացին պիտի հոգայ նրանց և ձիաների ուտելիքն ու խմելիքը։ Ժողովուրդը ուժասպառ եղած այսչափ զրկանքներից՝ մի քանի անգամ գանգատ է ներկայացրել կառավարութեան, որը աւելի կատաղեցրել է աղաներին, իսկ կառավարութիւնը ինչ ասել կ'ուզէր, որ հազարաւոր անհետևանք բողոքների շարքն է ձգել սրանք ևս։ Նա աւելի ձեռնտու է համարում քրդի ուժեղանալը ի հաշիւ հայի։ Պակաս կեղտոտ դեր չէ կատարում և Խնուսի առաջնորդական տեղապահ Տէր Բարդուղիմէոս քահանայ Տէր Մարգարեանը, այս կաշառակեր ու մատնիչ վատը։ Անցեալ տարի Բուլանուխի Աքրա գիւղացի Հայտարը սպանեց 4 հայ նոյն գիւղից-իրենց գերեզմանատից հանել տուաւ 2 թարմ դիակներ և կառավարութեան տեղեկացրեց թէ սպանուածները ջան-ֆէդայիներ են, որոնք երկու մարդ են սպանել. գիւղացիների գանգատելուց յետոյ, Հայտարից 7 ոսկի կաշառք առնելով հաստատեց նրա խօսքերը։ Այսպիսի բացարձակ եղեռնագործութիւնից յետոյ գիւղացիներից 12 տուն փախչում են ուրիշ գիւղեր, թողնելով իրենց տունն ու ցանքերը։ Հայտարը բռնել է տալիս դրանցից 5-ին. վերջիններիս քահանային դիմած ժամանակ, նա բարկանում է և խրատում հաշտուել Հայտարի հետ։ Փախածները այլևս չեն վերադառնում և նրանց թողածը մնում է Հայտարին, որից մի շան բաժին էլ տէրտէրին է հասնում։ Արոս գիւղացիք գանգատեցին իրենց Աղա մշեցի Վարդով գիւղացի Ազմայինի վրայ, իսկ Բուռնազ գիւղացիք Խնուսի Զերնակ գիւղացի Մահմատի վրայ՝ նրանց անսանձ վարմունքների համար։ Էլփիս գիւղացի Թորոս Հայրապետեանը Շիւքրիի մարդկանց ձեռքով տարուած իր մի հօտ ոչխարի, 30 ոսկու կ եղբօրը ծեծելու համար գանգատում է Շիւքրիի վրայ. մատնիչ քահանան Շիւքրիից մի ձի և Մահմատից 5 ոսկի կաշառք ստանալով, յիշածներին իբրև ըմբոստ է ցոյց տալիս։ Ասելով թէ դրանք ուզում են որ քրդերը հեռանան, որպէս զի ջան-ֆէդայիները ազատ գնան-գան։

Ահա ձեզ Բրիստոսի փոխանորդը, որ բեռնաւորներին ու վաստակեալներին պիտի մխիթարէ. սա քահանայ չէ, այլ քրդից էլ աւելի վատ մատնիչ. մի գառնագլխոտ գայլ, որի շուտ վերացումը ժողովրդի միջից անպայման բարերար հետևանքներ կ'ունենայ։ Այսպէս է ապրում այս ժողովուրդը, այսպիսի պայմանների մէջ է քարշ գալիս նա, որ իր թշուառ կեանքի օրերը մի քիչ երկար տևէ։ Անմռունչ, գլուխը ցած ձգած, պիտի տանէ նա իր վրայ բարդած անթիւ պարտաւորութիւնները, իր վրայ ծանրացած անարդար բեռը, մինչև բոլոր մահկանացուների համար ճակատագրական մի օր հիչէ իր հոգին մնաս բարև ասէ իր համար սև աշխարհին, կարօտ բաօրեայ, կարօտ մի արդար վարչութեան։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՔՍԱՆԻՄԸԿԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

I

Պետերբուրգ 24 հոկտեմբեր 1902

Շարան շարան գնում են։ Ոտաբոբիկ, հև տալով, հազիւ ծածկած մերկութիւնը ծանր աշխատանքից կոշտացած, արևահար մարմնի, կնճռոտ՝ տարիքից առաջ, բայց վերջին ուժերը լարած՝ քայլում են նրանք։ Ոսկրացած ոտքերի քայլածքը հաստատ է, վճռական։ Խորունկ աչքերի փայլածքը բերկրալից է, յուսատու։

Քայլում են նրանք։ Քայլում են դէպի վաթան, դէպի երկիր, որի ճանհմանները հրէն է, սևին են տալիս հորիզոնի ծալքերում, դէպի այնտեղ, ուր այնքա՜ն վշտերի մշուշի տակ՝ յոյսերի ծիրն է ծլում։

Ո՞վքեր են դրանք, „հիւրասէր“ բռնութեան ափերից դէպի անհիւրընկալ բռնապետութեան օջախը քայլող այդ մարդիկ՝ կին, երեխայ, հարս, աղջիկ, ծերուկ, որոնք իրենց առասպելական աղքատութեան մէջ, տանջանքի, մաշածքի այդ չտեսնուած պատկերի տակ՝ դեռ այնքան կորովով, այն աստիճան յուսալից են։

— Ո՞վքեր են դրանք։

— Հայաստանցիներ։

Վեց տարի առաջ,— կոտորածների տարին էր այդ— երբ արեան փոթորիկը հայ երկրի մի ծայրից մինչև միւսը փչեց, երբ Կ. Պոլսի արքունական սենեակների մէջ յղփացած բռնապետութիւնը իր վախի ու ամօթի սանձերը արձակեց և սկսեց յորդառատ հոսանքը անմեղ արեան, տեղի ունեցաւ այն մեծ փախը, որի նմանը վաղուց չէր տեսել ասիական պատմութիւնը։ Գաղթականներ չէին դրանք և ոչ էլ փող, հանգիստ, նորութիւն որոնող զարիքականներ, որոնք մի երկրից միւսն են թափառում։ Փախստականներ էին դրանք։ Սիրոյ երկիրը, բայց հալածական երկրից։ Աշխատող, բայց թևերը կոտրած։ Ձողին ղուրբան, բայց աստանդական։ Ցիսուն հազար էին դրանք, արիւնարբու բռնութեան զոհ գնալ չցանկացողները, որոնք ապաստանեցին Կովկաս, երբեմն հիւրընկալ և այժմ անհիւրասէր այդ երկիրը։ Դառն օրեր քաշեցին։ Սև օրեր տեսան։ Հայ գեղջուկի փափկութեան կողքին ճաշակեցին կառավարութեան միշտ նենգ, միշտ կասկածոտ հալածանքը, վաղուան օրայ անգիտութեան սարսափը, վերադարձի անսահման կարօտը։

Բայց ահա և գ ա ր ձ ը։

Դարձ։ Որքան ցանկալի, բայց և որքան ճնշող ու վտանգաւոր։ Փակուած ճամբաների բացումն չէ այդ, որին 7 տարուց իվեր սպասում է աստանդական ժողովուրդը

և ոչ էլ մի խղճահարած հրաւէր, ստացած թիւրքաց կառավարութիւնից, կամ այդ կառավարութեան այնքան մտերիմ հայկական պատրիարքարանից։ Ոչ։ Ստիպողական մի դարձ, „դիպլոմատիական“ հալածանք, նենգամիտ մի խաղ, դրուած, ինչպէս յաճախ, օրէնքի խաբուսիկ ձևերի տակ։ Մանրամասները, ստացուած Թիֆլիսից և սահմանագլխից, այն տխուր վայրերից, ուր հալածականների ախ ե՛ր ը աշնանային փոթորկի դաշնակն է կազմում, բաց են անում ողբերգական տեսարան, լուսաւորուած այնպիսի օտարոտի գոյներով, որ միամիտներին անհաւատալի և խորաթափանցներին՝ չափազանց պիտի թուին։ Սակայն տեղեկատուները վստահելի են, գիտակ գործին։

Ադմինիստրատիվ խաղեր։ Օգոստոսի հրամանը՝ դառնալ անմիջապէս Թիւրքիա, եթէ չեն ուզում ռուսահպատակ լինել, կառավարչապետի խոստումը՝ դիւրութիւններ տալ գնացողներին, Կարսի նահանգապետի ճառերը, այնքա՜ն սփոփիչ և այնքան մեծահոգի, վերջապէս հանգանակութեան թոյլտուութիւն — մի շաբաթից յետոյ արգելելու համար — և ոստիկանութեան „ներողամտութիւնը“ Թիֆլիսի կայարանում՝ հնչող „մնաս բարովների“ ու „գնաս բարովներին“ — այս բոլորը ա դ մ ի ն ս տ ր ա տ ի վ խաղեր էին, խաղեր նախամտածած, գաւադիր, նենգաւոր. անխիղճ ծաղր, որի տակ թագնուած էք այս դժոխային միտքը՝ „կը գնաք, կը տեսնէք“։

Եւ իրօք։ Գնացին ու տեսան։ Վաթան չհասան՝ նրա կարօտով տապակողները։ Զը գրկեցին սպասելուց աչքը ջուր կտրած մայր ու քոյրերին։ Զ'արժանացան արիւնոտ, բայց քաղցր վայրերին... Դեռ սահման չհասած, որոտաց կօզակի հրամանը՝ „Կանգնի՛ր“։ Եւ կանգնեց մերկ ու քաղցած կարաւանը։ Եւ ահա այնտեղ, բնութեան անպաճոյճ բեմի վրայ սկսեց քաղաքական ողբերգութիւն, անյատակ վշտի և անծայր բռնութեան անպատմելի մրցումը...

Երեք օր տևեց հալածական կարաւանի սպասողական տանջանքը։ Բայց այդ երեք օրը՝ երեք ամիս, երեք տարի թուաց։ Անվերջ էր նա, ինչպէս բռնապետութեան ինտրիգը։ Եւ ո՞րն էր այդ ինտրիգը։ Այն, որ այդքան բազմութիւն դժոխային տանջանքներով դէպի սահմանը քշելը՝ մի նպատակ միայն ունէր — ասել նրանց՝ „Տեսէք, չէք կարող սահմանը անցնել, ուրեմն ուրիշ ճար չկայ, բայց եթէ ռուսահպատակ լինել“։ Ռուսահպատակ, որքա՜ն ծանր, որքա՜ն վտանգաւոր հնչեց այս պնգամ այդ ծանօթ բառը՝ փախստականի ականջին։ Տրամադրութիւնը թշնամական էր. և բազմութիւնը գրոհ տուեց, ընդդիմացաւ...

Ի՞նչ անել. ահա հարցը, որ տրուեց սահմանագլխին դարանած՝ վտանգից դողացող խուժանի առջև։ Ինչ անել։ Եւ ահա լուր եկաւ, որ Էջմիածնի ալեզարդ Հովիւը խորհուրդ է տալիս իր „ոչխարներին“ գնալ Պարսկաստան, կամ այնտեղ հաստատուել և կամ այնտեղով երկիր մտնել։ Բայց ինչպէ՞ս հնարաւոր է այդ։ Հնարաւոր է, ասում էին, որովհետև այդ քաղաքական խորհուրդը տուել է հայոց եկեղեցու ներկայացուցչին պաշտօնական բարձրագոյն մի անձ, նոյն ինքն Գրէգէ, այն տեսակցութեան ժամանակ, որ նա ունեցաւ Թիֆլիսում՝ վեհափառի հետ գաղթականական խնդրի առիթով։ Միամիտները հաւատացին — դժբախտը երբ չէ հաւատացել — և ճամբայ ելան դէպի Էջմիածին, Ատրպատական գնելու յոյսերով։ Հոս օր տեւեց այդ ճամբորդութիւնը։ Բաղցած, յոգնած, ենթակայ հիւանդութեան, ուժասպառ, անքուն, անկարող մի վայրկեան անգամ դադար տալու խղճուկ գլխներին, բայց սրտապինդ, յուսավառ, թէ „ահա կը հասնենք սահմանին, կը մտնենք մի նոր երկիր, և կը պրծնենք այս անվերջ տանջանքներից“...

Ունայն յոյսեր, ցնորական երազներ։ Նոյնիսկ հայկական կրօնական կենտրոնի պատերի տակ, ուր հալածականները ամենից քիչ էին սպասում կ ն ո ւ տ ի ներկայացուցիչներին, դարձեալ տնկուեց կօզակը և որոտալից դոչով հրամայեց՝ „Կանգնի՛ր“։ Եւ նորից կանգնեց համբաւայ վիշտը։ „Ռուսահպատակութի՛ւն, ռուսահպատակութի՛ն“։ Սակայն էլ ականջ չէր մնացել լսելու, և ոչ գլուխ՝ հասկանալու համար։ Անսասան էր բազմութիւնը, ինչպէս ինքը տանջանքը, անընկճելի, ինչպէս թագաւորող անարդարութիւնը։

Եւ այժմ... աստանդական, անտէր՝ քշում է նա, այդ հալածական բազմութիւնը՝ մի նահանգից միւսը, անհիւրընկալ Էջմիածնից՝ անճար Կարս, Կարսից՝ արտասուալայ Բասենի խորքերը. Բասենից՝ մշուշապատ լեռները։ Հայկական արիւնոտ իրականութիւնն է դա. հայ ժողովրդի տասն տարուայ ողբի ուրուականը, որ պտտում է կովկասեան սահմաններում, վերջին արարածքը այն ժ ո ղ ո վ ր դ ա ս պ ա ն ողբերգութեան, որի գլխաւոր դերակատարները այլևս արիւնարուշտ քրդերը և քաղցած գայմագամները չեն, այլ պճնուած գահերի վրայ բազմած թագակիր ոճրագործները...

Ու մի օր, երբ վրդովուած, կատաղութեան գերի՝ պատմեցի այս բոլորը Ֆրանսիացի մի ծանօթի, լաւ տեղեակ մայրաքաղաքի դիպլոմատ շրջաններին, նա, զարմացած հայկական միամտութեան վրայ, դառն շեշտով այս գաղտնիքը պատմեց. „Դեռ հոկտեմբերին՝ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը՝ Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով՝ դիմեց սուլթանին, խնդրելով, կամ աւելի ճիշդ՝ առաջարկելով ներս ընդունել վերադարձող գաղթականներին։ Դա առաջարկ էր և ոչ խնդիրք, որովհետև պ. Դելկասէ համոզուած էր, որ իր այդ քայլը արձագանք է Պետերբուրգի արքունիքի տրամադրութեան։ Սակայն սուլթանը մերժեց, և մերժեց՝ յայտարարելով այս նշանաւոր նորութիւնը. „գաղթականների խնդիրը արդէն վաղուց կարգադրուած է իմ և ռուս կառավարութեան մէջ“...

Ապշած, համարեա շանթահար՝ երկար, շատ երկար նայեցի ֆրանսիացի հայասէրի աչքերին։ Եւ նա, սրտագէտ, գուշակեց իմ յոյզը և գլուխը շարժելով կրկնեց. „Այո, արդէն վաղուց կարգադրուած էր“։

Յետագայ իրողութիւնները պերճաբան ապացոյց եղան այդ պայմանութեան, դառն և խրատական միանգամայն։

Որպէս փոխուեցին ժամանակները։ Պար ժամանակ, մինչև իսկ այն օրերին, երբ ռուսական տիրապետութիւնը, ի գէմս ռուս զինուորականութեան, նոր էր երևան գալիս թիւրքական և պարսկական սահմանագլխներին, հայ ժողովուրդը ոգևոր քրիստոնէական զգացմունքներով, տարուած Մոսկվայի թագաւորութեան իդէալներով, խաչ ու խաչվառով ընդունեց սուրի և վառօդի հերոսներին՝ և նետուեց նրա գիրկը։ Եւ սկսեց հայկական գաղթը դէպի Ռուսաստանի սահմանները։ 1828-ին, 1854-ին, 1878-ին ինքը հայն էր, որ աղերսում, խնդրում էր իրեն ներս առնել, հպատակ գրել, դնել ռուսական դրօշի տակ։ Նոյն սահմանագլխներում, ուր այժմ հնչում է կնուտը, երբեմն եղբայրական համբոյրների ձայներ էին

լուում. . . Սակայն դարը փոխուեց, փոխուեց և տեսարանը։ Այժմ հայն է փախչում, խոյս տալիս, թիկունք դարձնում ռուսահպատակութեան։ Ահա մի բուռն ժողովուրդ, հազիւ ոտի վրայ, որ գերադասում է դառնալ արեան օջախը, դէմ դնել կուրծքը դարևոր թշնամուն, խմել հալածանքի և դառնութեան բաժակը, քան մնալ և ռուսահպատակ գրուել. . .

Ի՞նչ է արդեօք սա. ամբոխային մի անգիտակից, անմիտ, ֆօտային փախ, թէ քաղաքական մի ապլակերպութիւն, քաղաքական մի նախազգացումն, որ ելեքտրական ուժով ցնցում է կոտորածի մնացորդներին։ Անբացատրելի մի երկիւղ է այդ, ներշնչուած արդի ռէժիմով, թէ այն որ քաղաքականապէս վերածնուող մի ժողովուրդ գերադասում է մեռնել կուռվ, քան քաղաքական մահով, զոհուել բացարձակ բռնապետութեան, քան մի բռնապետական ռէժիմի, որ լափում է ժողովուրդներ մի այլ ճանապարհով — քաղաքական սպանութեան ճանապարհով։ ընկնել իրրև նահատակ և ոչ իբրև թուլամորթ կամ ձուլման ենթակայ անգոյն մի զանգուած. . .

Տխուր են այս խոհերը և անլուծելի։

Բայց կենդանի փաստերը և անհերքելի։

Տարիները կը դան, կ'անցնին, բայց արտասուաշարժ այս փաստերը կը մնան։ Տանջող ազգերը մեծ յիշողութիւն ունին։ Որդիք չեն մոռանայ հայրերի գլխով անցածները և անցնող սերունդի սէրն ու հնազանդութիւնը, տարիներ յետոյ, կը փոխարկուի ատելութեան ու ըմբոստութեան, և մի օր, երբ դրաժակը կը լեցուի, անարդարութեան ու հալածանքի զատ զատ օղակները, իմի ձուլուած, կը կազմեն դժգոհութեան շղթան, որով պիտ կապուի, կաշկանդուի բռնապետութեան ձեռքն ու ոտքը։

Բռնութեան, անսանձ անարդարութեան, բարձրագոչ հալածանքի սև ռէժիմն է, որ պիտի ձուլէ այդ փրկարար շղթան։ Այդ ռէժիմի շնորհիւն է, որ խաղաղասէրը դառնում է յեղափոխական, երկրագործը՝ զինագործ, սերմնացանը՝ ռումբացան. . .

II

25 Նոյեմբեր

Արարատեան դաշտի նոյն բազմատանջ վայրերում, ուր հալածական դաղթականները հանգստի անկիւն չգտան, երևաց՝ մի հիւր, որի նմանը վաղուց չէր տեսել այդ երկիրը։ Տանջանքին յաջորդեց „խաղաղութեան“ աւետարերը — աստուածային սպասաւորը, որ միակ ապացոյցը պիտի չլիներ այդ ապաբախտ երկրում, որ այո, դոյութիւն ունի արդարասէր Աստուածը, թէև այնքա՛ն հեռու, որ չլսեց և չի լսում այդքան բուռն ամսերը, տանջուող ժողովրդի այդքան սրտաբեկ աղերսանքները։ Ո՞վ է „խաղաղութեան“ այդ ներկայացուցիչը։ Եկեղեցու հովիւ է դա, Վրաստանի էկզարխ Ալեքսէյ, որ պատրաստ է դնացել հայկական նահանգները, հնչեցնելու երկնքի օրհնութեան մեղեդիներ. . ։

Եւ երբ կովկասեան լրագիրները լուր բերին, որ Վրաստանի „հովիւը“ այցելեց Էջմիածին — հայկական կրօնական կենտրոնավայրը, ուր սիրալիր ընդունելութեան արժանացաւ։ Նրա՞ պետից, որի հետ երկու եկեղեցիների փոխադարձ սիրոյ և բարեկամութեան մասին ճառեր փոխանակեցին, մենք զգացինք ներքին սփոփանք, մի միխթարութիւն իրդիմաց այն երկարատև թշնամանքի, այն յաճախ գաղտնի, յաճախ բացարձակ անհամբերողութեան, որ ռուսական եկեղեցին՝ մղած միապետ կառավարութիւնից, վկայել է ուրիշ եկեղեցիներին և դրանց թւում հայոց լուսաւորչական եկեղեցուն։

Սակայն որքան կարճատև, տխրուն և խաբուսիկ եղաւ այդ սփոփանքը, սպասելիքների այս նոր յոյսը։ Հաշտութեան, փոխադարձ յարգանքի հող պատրաստելու նպատակով չէ, որ միապետական ուղղափառութեան վեղարակիր ներկայացուցիչը գնաց Էջմիածին և Արարատեան երկիրը, այլ ընդհակառակը, կաշկանդած հայկական եկեղեցուն՝ աբեղաների վրայ առանձին եկեղեցի հիմնելու կատարելու մի պաշտօն, որ եթէ հաճելի չէր միապետութեան գերի դարձած Ամենակարողին, գէթ հաճելի է Ամենակարող միապետութեան։

Դժուար և անզգոյշ կը լինէր հաւատալ, եթէ լուրերը լինէին մասնաւոր աղբիւրից, արդիւնք երկիւղից դամն բանդ՝ մի փազանցնող ամբոխի շշուկներին։ Ափսո՛ս։ Փաստը անհերքելի է, որովհետև նա արձանագրուած է կովկասեան կառավարութեան պաշտօնական օրգանում, „Կավկազ“ լրագրի մէջ, գրուած էկզարխին ուղեկցող մի հոգևորականի՝ աւագ-քահանայ Վլաստորգովի ձեռքով, յայտնի իբրև ժիր քարոզիչ և միսիոներ, գրուած, ինչպէս հաւաստում են, նոյնիսկ էկզարխ Ալեքսէյի գիտութեամբ, և եթէ կամիք՝ խմբագրութեամբ։

Ահա թէ, իմիջի այլոց, ինչ ենք կարդում էկզարխեան ճանապարհորդութեան այդ „կիսապաշտօնական“ նկարագրի մէջ.

«Սեպտեմբերի 28-ին հոմ.ապետը այցելեց Ալէքսանդրոպոլի գրոյ զինուորական եկեղեցիները եւ մերձակայ Ալէքսանդրովկա գիւղում հիմնեց մի եկեղեցի ռուսադաւանութիւն ընդունած հայերից նոր կազմուած համայնքի համար։ Հայերի մէջ այդ շարժումը դէպի ռուսադաւանութիւն՝ սկսուել է 20 տարի առաջ. այժմ նա կենդանի է եւ զօրեղ, եւ եթէ չլինէին կեանքի այն ճնշող հանգամանքները, որոնց մէջ ապրում են ռուսադաւանութիւն ընդունած հայերը, որոնք մնալով նոյն դիրքերում իրենց նախկին հաւատակիցների հետ ամէն տեսակ անախորժութիւններ են կրում նրանցից այդ շարժումը յայն աստիճան կը տարածուէր Երեւանի նահանգում։ Հասարակ ժողովուրդը չգիտէ այն տարբերութիւնը, որ կայ հայ-լուսաւորչականութեան եւ ռուսադաւանութեան մէջ, եւ իսկապէս դա այնքան էլ մեծ չէ, որ անանցանելի պնդուն դանդաղ։ Անդունդ կամենում են դնել նրան քաղաքականութեամբ պարապող տարրերը, դիւաւորապէս ինտելիգենցիայից, բայց ժողովուրդը դրած չունի նրանց հետ։ Վերջին ժամանակ կազմել են մի քանի ծխեր ռուսադաւան հայերից. նրանց հաւար ժամերգութիւն է կատարում. բացում են ուսումնարաններ։ Ադմինիստրացիան հնարաւոր համարեց դուսադաւան հայերին դուրս հանել իրենց նախկին տեղերից եւ կազմել առանձին գիւղեր։ Առայժմ կազմուած են Ալէքսանդրովկա եւ Ալլինս գիւղերը։ Թագաւոր կայսրը իր առատաձեռնութեամբ 5,000-ական ռուբլի նուիրեց այդ գիւղերում եկեղեցի-ուսումնարաններ կառուցանելու համար։ Վրաստանի էկզարխը միւս օրը հասաւ Ալէքսանդրովկա երեկոյեան ժամի 7-ին եւ երկար խօսակցեց ռուսադաւան հայերի հետ։ Աւագ-քահանայ Վլասորգով, Վրաստանի էկզարխի յանձնարարութեամբ քարոզ խօսեց ժողովրդին Ս. Գրիգորի, հայերի լուսաւորչի կեանքի մասին, եւ պարզեց այն միտքը, թէ Ս. Գրիգորը սուրբ էր այն ժամանակ, երբ հայերը բաժանուած չէին զուղափառ եկեղեցուց, եւ թէ իսկական գրիգորեաններ՝ հաւատարիմ Լուսաւորիչ Գրիգորին, իրաւացի կերպով կարող են անուանուել հայերից նրանք, որոնք ընդունել են ռուսադաւանութիւն։ Որովհետև այդ երեկոն սեպտեմբերի 30-ի նախընթաց երեկոն էր, երբ ռուսաց եկեղեցին

տանում է ս. Գրիգորի, Մեծ-Հայաստանի Լուսաւորչի յիշատակը, ուստի այստեղ էլ մաղթանք կատարուեց այդ սուրբի յիշատակին եւ տաճար էլ հիմնուեց նրա անունով։ Զուլպադիպութիւնը զարմանալի էր։ Տայ Աստուած, որ ս. Գրիգորի աղօթքներով ամի հայերի ռուսադաւան հօրը»։

Ի՜նչ անօրինակ լքբութիւն։

Կար ժամանակ, երբ ռուսադաւանութեան պրոպագանդը կատարուում էր գաղտնի, անուղղակի ճանապարհներով, դէպի այլակրօնները ցոյց տրուող որոշ յարգանքի վարագոյրի տակ. նա կատարուում էր բանտերի մէջ, ինչպէս օրինակ Երեւան, ուր կրօնափոխ բանտարկեալներին խոստանում էին ազատութիւն դժոխանման Սիբիրից. գիւղացիների շրջանում, դատարանների շէմքերի վրայ, ինչպէս Սուրմալուի գաւառում, ուր հաւատափոխներին երազել էին տալիս անվերջ հող և հարստութիւն. քաղաքների մէջ, ուր իբրև վարձ կրօնափոխութեան՝ խոստանում էին կառավարական կապալներ, զանազան դատաստանական վէճերի յաջող վախճան, կամ ապահով պաշտօն և ուռճիկ՝ ուեռ հիմնարկութեան մէջ... Իսկ այժմ, կորցրած ամօթի վերջին նշոյլը, խեղդած խղճի վերջին ճիչը՝ աներկիւղ և համարձակ՝ այդ պրոպագանդը կատարուում է պաշտօնապէս, հրապարակով, եկեղեցիի բերանով, պաշտօնական օրգանի էջերում, կառավարական աջակցութեամբ, կայսեր տուած փողով և հովանաւորութեամբ։

Սա է ռուսաց տիրապետութեան հարիւրամեակի նորագոյն պարծանքը, միապետութեան և միապետ եկեղեցու յիշատակելի առաջադիմութիւնը, արժանի դժբախտ ազգի հաւատարիմ երախտագիտութեան և քաղաքակիրթ մարդկութեան որոտընդոստ ծափերին...

Ես աթէիստ եմ, և հետևաբար՝ ոչ-բարեկամ բոլոր եկեղեցիներին, ուրեմն և հայոց եկեղեցուն։ Սակայն եթէ ինձ հարց տան, թէ որն է գերադասելի՝ հայոց եկեղեցի՞ն թէ ռուսացը, ես վայրկեան անգամ չեմ տատանի և կը պատասխանեմ՝ „Հայոց եկեղեցին“։ Երկու եկեղեցիներն էլ կապանքներ են մարդկային մտքի ազատ ուսման զարգացման, արգելք՝ փիլիսոփայական բազմակողմանի մտածողութեան։ Սակայն, մինը, եթէ ներելի է այս կոպիտ համեմատութիւնը, կապանք՝ շինած թոկից, և շատ հեշտ կտրելու համար, միւսը՝ ձուլուած երկաթից, ամուր, և շատ դժուար փշրելու համար։ Մէկը, հայոց եկեղեցին, ինքը աղօթող ժողովուրդն է. միւսը՝ ռուսաց եկեղեցին, ինքը հրամայող միապետութիւնը։ Մինը՝ մրրմունջ, մեղքի. միւսը՝ „պրիկազ“, երկիւղ։ Մինը տգէտ ժողովրդի հաւատը, միւսը կոպիտ միապետութեան աջ ձեռքը, որով նա բռնացնում է ռուս ժողովուրդը առանց կարեկցութեան, պահելով իր ահռելի զօրաբանակին կից՝ մի այլ նորաձոյլ բանակ՝ ուղղափառ հոգևորականութիւնը, նոյն միաժամանակ ստրուկ և ճնշող կազմը։

Անբաւական ռուս խեղճ ժողովրդի շրջանում, միապետ ուղղափառութիւնը իր զէնքը այժմ դարձնում է դէպի հայ ժողովուրդը և այս անգամ բացարձակ, առանց վարագոյրի։ Պատմական ստախօսութիւն, անբարտաւան ինքնագովութիւն, հայհոյանք դէպի այն բոլորը, ինչ սուրբ է, նուիրական զգացմունքի, հաւատի համար — ահա նորագոյն եղանակը գործելու, նկարագրած Վլոստօրգօվի „անկեղծ“ յօդուածներում։ Ահա մի լայն ճանապարհ, անբարոյականացնելու տգէտ, հաւատացող ժողովուրդը, որին կառավարութեան գործակալները վարժեցնում են հողի, փողի, հեշտութեան, նոյնիսկ մեդալի, և օղի համար վաճառել խիղճը և գաղափարները, միակ անկեղծ բանը, որ կայ և կարող է լինել ամբոխի մէջ, պատրաստելով նրան մի վիճակի, որ անասնական է և գերազանցապէս անբարոյականացնող։ Դա կրօնական էվոլիւսիոն չէ, այլ վաճառք. դա ժողովրդի կրթութիւն չէ, այլ բռնապետութեան գործող պատուանդան...

Եւ եթէ մի օր՝ մի հայ երիտասարդ, նոյնիսկ ոչ „քաղաքականութեամբ պարապողներից“, կամ երիտասարդ մի վարդապետ մտնի Ալեքսանդրովկա և Ագինոուասի՝ „Հայոցը, ոչ մարդկանց երկրի վրայ և ոչ Աստծուն երկնքում հաճելի չէ այդ խաբեբայութիւնը հաւատի անունով“, — այն ժամանակ, օ՜, այն ժամանակ, ճահիճը կը շարժուի — գաւառապետը կը զարնի հեռագիրը, եկեղարիս Ալէքսէյ, ստանձնած ժանդարմի պաշտօն, կը կցի այդ հեռագրին իր հայրական կարծիքը, Վլոստօրգօվ այդ կարծիքը ձեռքին՝ կը վազի ժանդարմների վարչութիւն... կը բացուի նշանաւոր գիրքը, որի կազմի վրայ գրուած է „Արմենսկօե դելօ“ (Հայոց գործը) և քաղաքական աքսորեալներին կ'աւելանայ էլի մէկը, այն „ոչ այնքան հեռու վայրերում“, ուր հազար ու մի եկեղեցի կայ, բայց ոչ մի Աստուած չկայ։

Է. ԱԿՆԼՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

(ՆԱՄԱԿ ԲՈՒԴԱՊԵՍՏԻՑ)

Վիեննայի Die Information-ի մէջ հրատարակուած է հետեւեալ թղթակցութիւնը Բուդապեստից (8 դեկտեմբեր 1903).

„Գալիցիայի և Բուկովինայի հայ գաղութների մէջ վերջերս նկատուում է շարժում ի նպաստ մայր-երկրի։ Հայերը, ինչպէս յայտնի է, ապրում են այստեղ դարերից իվեր և գրեթէ բոլորովին լեհացած են։ Նրանք առհասարակ անուանում են իրանց Armenopolen (Հայ-լեհեր)։ Նրանք շատ երախտագէտ են իրենց լեհական հայրենիքին, որը մեծ կատաստրոֆներից ազատուած իրենց պապերին այնքան ընդարձակ հիւրասիրութիւն է ցոյց տուել։ Սակայն դրա հետ միասին հայերը չեն կարող անզգայ լինել դէպի իրենց արիւնակից եղբայրների տառապանքները,—եղբայրների, որոնք հեծում են արևելեան ամենաարիւնարբու բռնապետի լծի տակ։

„Վերջին երկու ամսայ ընթացքում խլրտում է ընկել այդ գաղութների մէջ։ Մի հայ պրոպագանդիստ շրջան արաւ Գալիցիայում ու Բուկովինայում, ժողովներ կազմեց, ատենախօսութիւններ արաւ, նկարագրեց իր լեհական ազգակիցներին՝ Թիւրքահայաստանի ողբերգական վիճակը, Աբդիւլ Համիդի կազմակերպած դաւադրութիւնը հայ ցեղի դէմ, ժողովրդի լիակատար բնաջնջման ծրագիրը։ Գաղութները յուզուեցին. զանազան քաղաքներում կազմուեցին տեղական կոմիտէներ։ Որոշեցին իրենց ուժերի համեմատ աջակցել Թիւրքիայի ճնշուած եղբայրակիցների դատին։ Զերնովիցի լեհահայերը գումարեցին մի մեծ ժողով, որին մասնակցում էին և դրսից եկած պատգամաւորներ։ Միաձայն որոշուեց ուղղել Ռայխսրատի (աւստրիական պարլամենտ) լեհահայ պատգամաւորութեանը մի յիշատակագիր։ Վերջինս խմբագրուեց անմիջապէս և ապա մի ամբողջ շաբաթ պատրաստուեցաւ

թիւններ հաւաքեցին Գալիցիայում ու Բուկովինայում։ Սարբագրողների շարքում գտնւում են շատ բարձրաստիճան անձնաւորութիւններ“։

—

Ահաւասիկ այդ հակիրճ յիշատակագիրը, որ տպագրւած՝ ուղարկւել է աւստրիական Ռայխսրատի անդամներին (թարգմանւում ենք գերմաներէն բնագրից)։

Ձերդ Բարձր Բարեձնութիւն,

Բերլինի գաղնագրի 61-րդ յօդւածը ասում է.

«Բ. Դուռը պարտաւորւում է՝ անյապաղ իրագործել հայաբնակ գաւառներում այն բարենորոգումները ու ռէֆորմները, որ պահանջում են տեղական պէտքերը, եւ ապահովել հայ ազգաբնակութիւնը քրդերի ու չէրքէզների դէմ։ Նա պարբերաբար կը հաղորդէ այդ ուղղութեամբ արած իր քայլերը պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց կատարմանան վրայ»։

«Թէ ինչպէս կատարւեց այդ հսկողութիւնը, յայտնի է ամբողջ աշխարհին եւ բաւականաչափ ապացուցանում են ամենաղարհուրելի կոտորածները, ուր հարիւր հազարաւոր անզէն հայեր մորթւեցին, որպէս զոհեր, Եւրոպայի աչքերի առջեւ։

«Իրրեւ հայեր, լայն նախ եւ առաջ իրրեւ մարդիկ, որ կարեկից ենք ամէն մի թշւառութեան—իրրեւ հայեր, որ բախտ ունենք աւստրիական հպատակ լինելու եւ ազատօրէն մեր ձայնը լսեցնելու,—խնդրում ենք թախանձագին Ձերդ Բ. Բարեձնութեանը՝ բարձրացնել Ձեր կարող ձայնը թիւրքայ լծի տակ անքացող հայերի թշւառութիւնը մեղմելու համար։ Առիթները չպիտի պակսին Ձերդ Բ. Բարեձնութեանը. պարլամենտը եւ պատգամաւորութիւնները (Die Delegationen) ուշադիր կը լինեն Ձեր ձայնին, որը կը լսւի եւ հաւանութիւն կը ստանայ Աւստրիայի սահմաններից դուրս։

«Յոյս ունենք, որ Ձերդ Բ. Բարեձնութիւնը՝ ներշնչւած հայերի ծանօթ տառապանքներով՝ պիտի կատարէ մեր խնդիրքը։

(Հարիւրաւոր ստորագրութիւններ)

Ձերնօվից
1902 Նոյեմբեր

Այդ յիշատակագիրը լոյս տեսաւ Վիեննայի Neue Freie Presse-ի եւ ուրիշ թերթերի մէջ։

* * *

Ունգարիայի մայրաքաղաքում եւս հայկական խնդիրը յուզեց առաջին անգամը հրապարակօրէն անցեալ դեկտեմբերին։ Մեր ընկեր Վարանդեան՝ լեհահայ գաղութներից այս կողմերը անցնելով՝ խորհրդակցութեամբ Ունգարական պարլամենտի նախագահ՝ կոմս Ապօնիի, ֆինանսների մինիստր Լուկաչի և մի շարք պատգամաւորների հետ՝ որոշել էին կազմել ունգարա-հայ կոմիտէ, որը յարելով միջազգային հայասէր կոմիտէին՝ սիստեմաբար պրոպագանդ մղէր յօգուտ հայկական ռէֆորմների։

Պիէռ Կիառի Բուդապեստ գալը աւելի եւս տաքացրեց մաղառ հայասէրներին և դեկտեմբերի 14-ին պարլամենտի դահլիճներից՝ մինչ, ակադէմիկոս և հուչակաւոր ճանապարհորդ կոմս Զիչիի նախագահութեամբ տեղի ունեցաւ „Պրս Արմենիա“-ի խմբագրպետի առաջին կոնֆերանսը հայոց հարցի մասին։ Ներկայ էին՝ նախագահ Ապօնի և բազմաթիւ պարլամենտական գործիչներ, որոնց շարքում մի քանի ունգարահայ պատգամաւորներ՝ նախկին մինիստր Դանիէլ Արմենոպոլի պատգամաւոր կոմս Կարաչօնի, Պոպ Գէյզա և այլն։

Շատ պզոյշ ու չափաւոր տօնով՝ Կիառ ներկայացրեց—հիմնւելով լոկ դիւանագիտական գօկումենտների վրայ—Տաճկահայաստանի արդի վիճակը, անցեալ աղէտները, ներկայ հարստահարութիւններն ու բնաջնջման ձգտումները։ Փակագծի մէջ նկատենք, որ Ունգարիայում դեռ ևս շատ ուժեղ են համակրութիւնները դէպի Տաճկաստանը, որը եղել է միշտ անկեղծ բարեկամ մաղառներին, երբեմն նոյնիսկ ազատ ապաստան մաղառ փախստականների համար։

Այդ հանգամանքը յիշեցրել էր մեր ընկերոջ՝ ինքը նախագահ Ապօնի, որը այնուամենայնիւ անհրաժեշտ էր սեպել, նոյնիսկ Թիւրքիայի շահի տեսակէտից, հայասէր պրոպագանդը և հայկական ռէֆորմների իրագործումը։ Այդ վերին աստիճանի համակրելի անձնաւորութեան շնորհիւ էր, որ հնարաւոր եղաւ մտնել զանազան շրջաններ, ծանօթութիւններ կապել, մամուլի ներկայացուցիչներին դրաւել և այլն։ Նա ոչ միայն ամենասիրուած և ամենաժողովրդական մարդն է այսօր Ունգարիայում, այլ նա մեծ յարգանք է վայելում և արտասահմանեան քաղաքական շրջաններում։ Զը նայած իր փափուկ պաշտօնի անպատեհութիւններին՝ նա սիրով ու եռանդով նպաստաւորեց հայկական պրոպագանդի սկզբնաւորութիւնը իր երկրում. առանց տատանւելու նա առաջարկեց ազգային գերագոյն պաշտօնական հիմնարկութիւն—պարլամենտը իրրև ժողովատեղի և նոյնիսկ հրահանգեց, որ նիստի միջոցին բաժանեն պատգամաւորներին հրաւիրատոմսերը հայկական կոնֆէրանսի համար։

—

Կիառի զեկուցումը խոր տպաւորութիւն թողեց բոլոր հանդիսականների վրայ, որոնք—զարմանալի և ցաւալի հանգամանք — կարծէք նրբութիւն էին լսում։ Կիառից յետոյ կոմս Ապօնի խօսեց ընդհանուրի կողմից. „յիշատակւած փաստերը, ասաց նա, այնքան ակներև են և այնքան վշտաբեր, որ աւելորդ է նոր հարցումներ տալ պ. Կիառին“. ապա պատկառելի կոմսը շեշտեց, որ անհրաժեշտ է Ունգարիայում ևս սկսել պրոպագանդ։

Մաքերի կարճատև փոխանակութիւնից յետոյ՝ ժուրնալիստների ակումբի նախագահ՝ պ. Վեսսելի առաջարկութեամբ որոշւեց երկու օր յետոյ գումարել մի երկրորդ ու աւելի մեծ ժողով, որը և կայացաւ նոյն Վեսսելի նախագահութեամբ. ներկայ էին մամուլի բազմաթիւ ներկայացուցիչներ և պարլամենտի անդամներ։

Զը մոռանանք յիշել, որ առաջին ժողովի մանրամասն արձանագրութիւնը հետևեալ օրը հեռագրի ձևով շրջան էր արել արդէն Աւստրո-Ունգարիայի ամբողջ մամուլի մէջ։ Թիւրքաց դեսպանը, ինչ ասել կուզէ, սաստիկ յուզւել է։ Յանկարծակիի գալով և մանաւանդ ապշած կոմս Ապօնիի մասնակցութեան փաստից՝ նա հապճեպով դիմումներ էր արել ուր հարկն է և միաժամանակ Բուդապեստի մէջ շարժման մէջ էր դրել իր ծառաներին։ Մի քանի օր շարունակ փէսաւոր մութ անձնաւորութիւններ սլքտում էին—ո՞վ անմիտ բռնապետութիւն—„Պանոնիա“ հիւրանոցի շուրջը, ուր պէտք էր լրտեսել Համիդի թշնամիներին։ Չեմ ուզում երկարօրէն ծանրանալ անցած-դարձածի վրայ. ասեմ միայն, որ թէ Վիեննայի տաճիկ դեսպանը և թէ Բուդապեստի տաճիկ հիւպատոսը, ամէն ջանք գործ դրին՝ վիժեցնելու Կիառի երկրորդ ատենախօսութիւնը ժուրնալիստների ակումբի մէջ ապա և, անշուշտ, արտաքսել տալու „ագիտատորներին“։ Անստորագիր նամակներ ու սպառնալիքներ էին տեղում թիւրքերի կողմից կոմս Զիչիի, Վեսսելի և անշուշտ նաև ուրիշների հասցէին։ Այդ բոլոր մեքենայութիւնները ապարդիւն անցան, որովհետև Ապօնի մեղոնց հետ էր։

Այնուամենայնիւ ունգարական կառավարութեան դլուխ՝ մինիստր-նախագահ Սէլլ Թիւրքական և ուրիշ ճնշումների տակ՝ ստիպուած եղաւ կիսապաշտօնապէս յայտարարել, որ նա համարում է հայկական պրոպագանդը այժմ անպատեհ և անթոյլատրելի։

Մենք քամենահաստատ աղբիւրից գիտենք, որ մինիստրի նոյնիսկ այդ ակամայ քայլը խիստ զայրոյթ է յարուցել պարլամենտի ամենաականաւոր գործիչների մէջ, որոնք— իրենց հանդիսաւոր խոստման համաձայն—ժողովի նախիստների հետ ձեռք ձեռքի տուած՝ պիտի կատարեն իրենց մարդկային պարտականութիւնը։ Ունգարական Դէլէգասիօնի մի քանի անդամներ խոստացել են՝ գարնանը — երբ կայսրութեան երկու մասերի դէլէգասիօնները պիտի գումարուին՝ կոմս Գօլուխօվսկուց հաշիւ պահանջելու տարաւոր արտաքին քաղաքականութեան մասին — հայկական խնդիրը հանդէս բերելու։ Մաշտա գործիչների այդ որոշումը կարևոր է առաւել ևս այն պատճառով, որ Ունգարիան Հաբսբուրգեան կայսրութեան արտաքին քաղաքականութեան խնդիրների մէջ գերակշռող դեր է խաղում։

Նոյն խոստումը տուել են մերոնց՝ աւստրիական դէլէգասիօնի երկու կարևոր անդամներ՝ կոմս Դէդուշիցկի և պատգամաւոր Բարվինսկի։

Աւստրիական պարլամենտի մէջ՝ լեհահայերի ծանօթ յիշատակագիրը ստանալուց անմիջապէս յետոյ՝ արդէն երկու անգամ հարցապնդումներ եղան զանազան պատգամաւորների կողմից—առաջինը խօսեց պատգամաւոր Բրայտեր—տաճկահայոց աղետների և Աւստրիայի պարտաւորութիւնների մասին։ Բաւական մանրամասն նկարագրեց Թիւրքահայերի արդի վիճակը, հարկային սիստէմը, թալանի և աւերման քաղաքականութիւնը։

Սակայն այդ տեսակ հարցապնդումները — խնդիրը յուզելուց զատ, որ անշուշտ նոյնպէս ունի իր օգտակարութիւնը—ուրիշ հետևանք չեն ունենում, քանի որ Գօլուխօվսկին, որ միակ պատասխանատուն է կայսրութեան արտաքին քաղաքականութեան համար՝ պարլամենտի նիստերին ներկայ չի գտնուում։ Ամենակարևորը, ինչպէս ասացի, Դէլէգասիօնները են (պատգամաւորութիւնները), որոնք գումարուում են երկու կողմերից — Աւստրիայից և Ունգարիայից—իւրաքանչիւր տարի, մերթ Վիեննայում, մերթ Բուդապեստում և կոմս Գօլուխօվսկուց նախապահութեամբ հանգամանօրէն արծարծում են միջազգային քաղաքականութեան խնդիրները։

* * *

Վիեննայում, դեկտեմբեր ամսին, տեղի ունեցաւ մի կոնգրէս, որ նպատակ ունէր կազմակերպել — մամուլի միջոցով, գլխաւորապէս—սիստէմատիկ մի պրոպագանդ յօգուտ Թիւրքահպատակ ժողովուրդների և գործադրել տալ Բերլինի դաշնագրի 61-րդ ու 23-րդ յօդուածները՝ վերաբերեալ Հայաստանին ու Մակեդոնիային։

Կոնգրէսը, որին մասնակից էին պատգամաւորներ հայերի, ալբանների և մակեդոնացիների կողմից, տևեց 2 օր (դեկտ. 11-12)։ Միաձայն դրուեց հետևեալ որոշումը.

«Զբաղեցած վերջին ժամանակներս Թիւրքայի կառավարութեան դեսպանատների կողմից արուած դիմումներին և ռէֆորմներն իրագործելու նորանոր խոստումներին, չը նայած մի յանձնաժողովի և մի յատուկ քննիչի նշանակելուն—բոլոր նրանք, որոնք լաւ տեղեակ են արևելքի վիճակին, գիտեն, որ այդ դիմումներն ու խոստումները մոռացուելու են, ինչպէս և նախկինները, և որ այդ պատճառով պիտի ծանր անցքեր տեղի ունենան։

Բերլինի դաշնագրի 61-րդ և 23-րդ յօդուածներում նախատեսուած են ռէֆորմներ Եւրոպական, ինչպէս նաև ասիական Թիւրքիայի համար։ Ոչ մէկը այդ ռէֆորմներից չի իրագործուել, մինչդեռ արիւնոտ անցքերը, որոնք շատ ժամանակ չէ, ինչ կատարուել են և որոնք տակաւին չեն մոռացուած—ապացուցանում են, որ ներկայ վիճակը շատ վտանգաւոր է Եւրոպայի խաղաղութեան, նոյնպէս և Թիւրքիայի գոյութեան համար։

Կոնգրէսը կանգնած է Բերլինի դաշնագրի խարխսի վրայ և պիտի ջանք գործ դնէ, որպէս զի իրագործուին այն ռէֆորմները, որ պետութիւնները իրաւունք ու պարտաւորութիւն ունեն պահանջելու, և որպէս զի Բ. Դուռը անհրաժեշտ երաշխաւորութիւն տայ՝ ռէֆորմների իրական գործադրութեան համար։

Մենք պիտի ձգտենք դէպի Թիւրք պետութեան այլևայլ ժողովուրդների և դաւանութիւնների իրաւունքների հաւասարութիւնը. մենք պիտի բաղձանք, որ յանդիմարդկայնութիւնն ու արդարութիւնը, քանի որ այդպիսով միայն պիտի հնարաւոր դիտի ապահովել Եւրոպայի խաղաղութիւնը և կանգուն պահել Թիւրքիայի գոյութիւնը, որին միշտ սպառնում են հողերի նորանոր կորուստներ։

Բերլինի դաշնագիրը նախատեսել է ստորադրող պետութիւնների աշխատակցութիւնն ու հսկողութիւնը՝ ռէֆորմների մշակման ու գործադրութեան համար։ Բնական է, հետևապէս, որ կոնգրէսը կոչ անէ վերոյիշեալ պետութիւններին՝ միջամտելու նոյնիսկ Թիւրքիայի շահի տեսակէտից»։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՋԻԳԱՆԱՍԵՐՏԻ ՆՈՒՍԱԿԱԼՈՒԹԵՆ ՃԻԶՐԸ ԳԱՒԱՌԱԿԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

(Պատճէն, Թիւրքերէնէ թարգմանուած)

(Շարունակութիւն № 11-ի)

Մուսթաֆա փաշան, որ այդ պահուս Զէզանէն կը վերադառնար, երբ լսեց արդարութեան այս կարգադրութիւնները, սկսաւ թէ խօսքով և թէ գործով հանրային խաղաղութիւնը խռովել և մտածելով, որ անոր կողմէն այն պահուն իգործ դրուած բարբարոսական գործերուն մանրամասն նկարագրութիւնը ամէն միւսլիմանի խորին վիշտ ու ցաւ պիտի պատճառէ, պիտի բաւականանամ միայն հոս արտագրելով պատճէնը 1333 համար և 2 հոկտ. 313 (1897) թիւ տեղեկագրին, որ ճէզրէյի Իտարէյի ժողովոյ և դատարանի անդամներու կողմէն պատրաստուած և մատուցուած էր Մարտինի միւթէսարիֆ Խաիֆ էֆէնտիին, որը խաղաղութիւնը վերահաստատելու պաշտօնով ճիզրէ կը գտնուէր։

Պատճէն Տեղեկագրին.—„Միրանի պետ Մուսթաֆա փաշային ճիզրէ գաւառակին մէջ 5-6 տարիներէ իվեր իգործ դրած հալածանք և կեղեքումները որչափ ալ գաւառային, նահանգային և կեդրոնական իշխանութեանց ամէնուն ալ ծանօթ իրողութիւններ ըլլան, բայց և այնպէս նկատելով որ անոր կողմէն գործադրուած և գործադրութիւնը կանխամտածուած բազ-

մաթիւ անվայել արարքներու մասին ձեռնհաս իշխանութեանց միշտ դիմումներ ընելը և տեղեկութիւններ հաղորդելը և այդ կերպով խաղաղութեան և ապահովութեան վերահաստատման և ազգաբնակութեանց հանգըստութեան և անդորրութեան նպաստելով Ն. Վեհափառութեան արեւշատութեան աղօթքներ բարձրացնել տալը մեր ամենուս ամենանուիրական պարտականութիւնն է, ուստի կը գանք ներկայիս յիշեալ փաշային վարմունք և արարքները ամփոփ կերպով տեղեկագրել։ Մուսթաֆա փաշան Զօղանէն վերադարձած պահուն, իր հանգիպած 12 գիւղերէն 6-ը այրած և գիւղացիներու բոլոր գոյքերը կողոպտած է։ Մնացեալ միւս վեց գիւղերուն գոյք և ստացուածքները և ընտանի անասունները կողոպտելէ դատ, դարձեալ յիշեալ 12 գիւղերուն և ուրիշ շատ մը գիւղերու, ուր ոչ կոխած է, ցանքերը ու կանաչեղէնները իր ոչխար և պաճարներուն արածել տալով՝ այս վայրերու առատութիւնը երաշտութեան և սովի փոխած է։ Այդ արարքները հաստատող Բաղէշի նահանգէն հասնող բողոքներու և դիմումներու և իրեն ընկերացող ոստիկաններու կողմէն տրուած տեղեկագիրներու վրայ խնդիրը վերջնականապէս հաստատուած ըլլալուն, ատոնք ժամանակին ձեր վսեմութեան հաղորդուած էր։ Յիշեալ փաշան Միզրէէն դուրս իր յանդգնած ոճրագործութիւններով և ձեռք բերած աւարներով չբաւականանալով երբ Միզրէի հողին վրայ ոչ ոք կը կոխէ, կըսկսի գիւղերը աւերել, խեղճ գիւղացիները ջնջել և հարստահարել և կուգայ Ճիզրէէի դիմաց Պանի-խանը կոչուած վայրին վրան վրանը կը հաստատէ։ Այնտեղ իրեն և իր աշիրէթին վրայ մէկ միլիոն ղուրուշէն աւելի յետնեալ տուրքին համար կառավարութեան հետ տեղի ունեցած բանակցութեան միջոցին, զանազան պատրուակներով կառավարութիւնը խաբելով և ժամանակ շահելու համար 8-10 օր բանակցութիւնը ձգձգելով, այդ միջոցին իր ամբողջ ոչխարները կամրջէն անապատի կողմը կ'անցնէ և այնտեղեր կըսկսի խառնակութեան կրակը արծարծել։ Այդ մոռք իբր օգնութիւն Սէլիմիայի աղաներու, իր տղան Իպրահիմ պէյի հրամանատարութեան տակ ձիաւորներէ կազմուած խումբ մը կը ղրկէ հոն, որոնք ճամբան Թայիան աշիրէթէն մի քանի մարդերու հանդիպելով՝ անոնցմէ մին կը մեռցնեն և ստացուածքները ու անասունները կը յափշտակեն և Ճիզրէի մէկ ժամ հեռաւորութեամբ Գասր-Ցէլան գիւղին վրայ խումբ մը հետևակներ ղրկելով, գիւղացւոց գոյքերը թալանել և տուներնին քանդել կուտայ։ Ինչպէս վերը յիշած ենք, պետական գանձին ունեցած պարտքին վերջ մը տալէ առաջ իր աշիրէթով կամուրջէն անդին անցնելով, հոն 4-5 օրուան հանգըստութեան միջոցին իր պարտքին մի կերպ վճարման վերաբերմամբ տեղի ունեցած բանակցութեան մէջ բոլորովին մերժողական պատասխան տալով հանդերձ, իր արձկած հրամաններու և գրած արգելքներու չհամակերպող ժողովրդին և պաշտօնեաներու գլխուն զանազան սպառնալիքներ տեղացուցած և պահ մըն ալ աշիրէթները շուկային և պազարին խուժել տալով՝ ասոր անոր, հանդիպած մարդերուն վրայ յարձակելու սկսած էին։ Թէև կառավարութեան ձեռք առած անմիջական միջոցներու շնորհիւ չկրցաւ գասապային մէջ չարիք մը գործել, սակայն կամուրջէն անդին բնակութիւն հաստատելէն առաջին օրէն իսկ 200 աշիրէթ, իրմէ ստացած հրամանին համեմատ, Հաղաքի ճամբան իջնելով Հաղաքի և Քեարսանի բնակիչներէն 2-3 հոգիէն 9 աւանակ և 15 մէճիտիէ դրամին և ուրիշ գոյքերը կը կողոպտեն և յետոյ Մուսուլէն Նիզիպին գացող կարաւանն ալ կը թալանեն, որոնք յիշեալ գիւղերու բնակիչներու կողմէ տրուած աղերսագրերու և Քէսքիկրանի տասանորդի պաշտօնեայի ղրկած գրութեամբը հաստատուած են։ Փաշան 2 օրէ իվեր այ Ճիզրէէի դիմացէն հելնելով 1½ ժամ հեռաւորութեամբ Ռիհանի գեղը կը քաշուի և Ճիզրէէի ժողովրդին նկատմամբ սնուցած իր չար նպատակներուն գործադրութեան կը ձեռնարկէ. նախ Ռիհանի գիւղին արմտիքները և կանանչեղէնները կը փճացնէ, այսօր ալ ստոյգ աղբիւրներէ կը լսենք թէ Կիւզէք, Ճէպէգ և Պապիտգուպ գիւղերուն արմտիք և ճնասունները թալնելուած է և անդադար ուրիշ գիւղերու վրայ ալ յարձակումներ կը կատարէ։ Այսու հանդերձ դեռ առաջին օրէն Տուտիրան աշիրէթէն 70-ի մօտ կինեալ խուժանը, իրմէ ստացած հրահանգին համեմատ, Աճրին գիւղը գիշերով կը կոխեն, 800 ոչխարները կը կողոպտեն, գիւղացիներէն մարդ մը ալ կըսպաննեն և մի հատ ալ կը վիրաւորեն, որու վրայ ղրկուած քննիչ պաշտօնեան Աճրին վայրը հասնելուն՝ նա ալ կըսպաննուի և 2 մեռեալներու դիակները Ճիզրէ փոխադրելով ցոյց տուեցան նաև ձեր վսեմութեան, որու վրայ սպաննուածներուն ազգականներուն լացն ու կոծը ձեր վսեմութեան ալ գութն ու արգահատանքը շարժեր էր։ Ուստի նկատելով որ յիշեալ փաշան յայտնի համարձակ կը յանդգնի խաղաղութիւնը վրդովելու, նկատելով, որ Ճիզրէի մէջ չէն տեղ մը ձգելու դիտաւորութիւնը հրապարակաւ կը յայտնէ, նկատելով, որ օրէնքի և արդարութեան հակառակ ընթացքները հետզհետէ մեծ չափեր ստանալով ապստամբութեան և բռնակալութեան կը հասնի և նկատելով, որ բռնակալութեան հետևանքը կրնայ ծանրակշիռ հոգեր առաջ բերել, հենևաբար անհրաժեշտ պէտք մըն է որ այդ հետևանքը վանելու համար խաղաղութիւնը վերահաստատելու միջոցներ ձեռք առնի, որովհետև այդ անձնաւորութիւնը պետութեան և ազգին վնասակար և դաւաճան մըն է և անիկայ աշիրէթներու պետի պաշտօնի մէջ ձգելը արդէն երկար և աւժեղ բազուկի մը իշխանութիւն մ'ևս յանձնել է, որ բնաւ նպատակայարմար չէ։ Ուստի կը խնդրենք ձեր վսեմութենէն, որ բարեհաճի այս անձը իր ամբողջ ընտանիքով մեր կողմերէն ուրիշ վայր մը փոխադրելու միջոցներուն ձեռնարկել և վերահաստատել խախտուած ապահովութիւնը և այդ կերպով Ն. Վեհափառութեան հլու հպատակները այդ անձին ճիրաններէն ազատելով արդարութեան և ապահովութեան ճամբու մը մէջ վերադարձնել զանոնք. հրամանը՝ ձերն է»։

Ն. Վ. միւթէսարիֆը այդ վշտաբեր տեղեկագիրը ամբողջութեամբ կարդալէ և բնակած տանը առջևը գրուած երկու դիակներու վրայ աչք մը դարձնելէ յետոյ վայրենապէս կ'ըմբռնէ ժողովրդին մէջ օտակայ լեռները ամրանալու ընդհանուր դիտաւորութիւնը, որուն տարած էր վինք ալ անտանելի դարձած թալանները, կողոպուտները և սպանութիւնները և որը կրնար մեծ խառնակութենէն տեղի տալ. միւս կողմէն ինքը զառամեալ և մտաւորական կարողութիւնը կորսընցուցած և բարեկարգութիւն և վարչական բնրւոք մատակարարութենէ զուրկ բայց և այնպէս շահամոլ մի անձնաւորութիւն, սկսաւ տխուր դէմքով մը ձեռքերովը ծունկերուն թափ

տալ և ըսել թէ „միթէ՞ կարելի է հերքել այս օրինակ դանցութիւնները և ոճիրները զորոնք աչքով տեսած եմ. կարելի՞ է միթէ որ ամէն խիղճ խոյլ տայ որ այս դիակներուն շուրջը ողբացող դժբախտ կիները օրէնքի արդարութենէն և Նորին Վեհափառութեան շնորհքներէն զրկուին“ և այլ կեղծ ու պատիր շողոքորթութիւններով ժողովրդին քուզումները փարատել և կը յաջողի իսկ յուզեալ մտքերը հանդարտեցնել այն ստախօսութեամբ, թէ ճիզրէն մօտերս միթէսարիֆութեան պիտի փոխուի։ Բայց յետոյ Մուսթաֆա փաշային հետ գաղտնի տեսնուելով կը բանակցին Տիգրանակերտի բանտին մէջ գտնուող Թահիր, Ֆաթթահ և Ապտուլլահ աղաներու ազատ արձակելու և տեղերնին դարձնելու միջոցներու վրայ։ Այս գաղտնի բանակցութեան յաջորդեց գայմագամ Ահմէտ պէյի պաշտօնանկութիւնը, որը բաւական եղաւ համոզել ժողովուրդը թէ միթէսարիֆը պիտի կրնայ իգլուի հանել իր կողմնակցական դիտաւորութիւնը, ուստի իսլամ, քրիստոնեայ և հրէայ ժողովուրդը համաձայնելով Տիգրանակերտի կուսակալութեան և բարձրագոյն իշխանութեանց 23 հոկտ. 1897 թուականի հետևեալ հեռագիրը զարկին, որուն մի օրինակը պահուած է հեռագրատան մէջ։

ՀԵՌԱԳԻՐ

Միրաններու պետ Մուսթաֆա փաշային կողմէն սուլթանի հաւատարիմ հպատակներու գլխուն իգործ դրուած զրկանք և հարստահարութիւնները տեղական կառավարութեան և բարձր իշխանութիւններու որչափ որ հաղորդած և արդարութեան գործադրութիւնը պաղատած ենք, բայց մեր պաղատանքները ցարդ ոևէ արդիւնք մը չտուին։ Փաշային իսլամ և քրիստոնեայ գիւղերը թալնելը և ոչխարները կողոպտելը. իսլամներէն 10 և քրիստոնեաներէն 12 հոգիներ սպաննած ըլլալը և գազանի խաղաղութեան բոլորովին խանգարուած լինելը կուսակալութեան և միթէսարիֆութեան մօտ հաստատուած են։ Ճիզրէն այցելող Մարտինի միթէսարիֆ Խաֆի էֆէնտիի կարգադրութիւններուն վրայ յոյս դրած ժողովուրդը ցարդ համբերած է. բայց երբ կը տեսնենք որ Ն. Վսեմութիւնը մեր վստահութիւնը գրաւած գայմագամ Ահմէտ պէյը պաշտօնէն կը ձգէ, Մուսթաֆա փաշան յարգանօք կը պատուէ, Ապտի Զատէ Ֆաթթահ և Թահիր ու Շէյխ Ալիի որդի Ապտուլլահ աղաները, որոնք այնքան ժամանակներ մեզ հարստահարած և զանազան վշտերով խոշտանգած են, Տիգրանակերտէն պիտի վերադարձնէ, վերջապէս երբ կը տեսնենք որ ճիզրէյի ասկից առաջուայ ծանօթ խնդրին վրայ դատապարտուած և Մարտինէն խստիւ պահանջուած Նորա 50-60-ի մօտ փախստական աւազակ արբանեակները ճիզրէ մտնելով ժողովրդին վրայ կըսպառնան, հետևաբար մեր վիճակը առաջուընէն աւելի վատթարացած և մեզի համար ալ մեր հայրենիքի մէջ մնալու ապահովութիւնը դրականօրէն կորսուած է։ Եթէ մի գազայի ամբողջ ազգաբնակութեան լաց ու կոծին անլսելի մնալու պատճառը՝ համիդիէ զօրքերուն կարգապահութեան նկատումներն են, աշիրէթն ալ նոյնպէս այդ հարստահարութիւններէ և հալածումներէ ձանձրացած է. և այսօր բացարձակապէս յայտնի իրողութիւն մըն է որ հրամանատարութիւնը ուրիշի մը ձեռքը յանձնուի, ցանկացեալ կարգապահութիւնը աւելի ապահով ճամբու մը մէջ պիտի մտնէ։ Եթէ մեր բողոքները թըշնամութեան կը վերագրուին կոր, ամէն ձեռնհաս իշխանութիւններէն մէյ մէկ անձնաւորութիւններ ուղարկուելով մեր վիճակը լուրջ քննութեան մը ենթարկուի։ Իսկ եթէ մեր ապահովութիւնը և անդորրութիւնը մեզ երբէք չպիտի վերադարձուի, ինչպէս մեր 21 հոկտ. թուակիր հեռագրով ալ յայտներ ենք, ստիպուած ենք մեր հայրենիքը ձգել և հեռանալ։ Ուստի մեր վերջին շունչով և ամբողջ զօրութեամբը կը պաղատինք որ մեզ պաշտպանէիք մինչև այն օրը, ուր մեր հայրենիքի ամէն մի քարին և հողին մեր վերջին մնաք-բարեաւը (հրաժեշտը) տալով և մեր զաւակներու և ընտանիքի կարօտաբուղխ վիշտ ու ողբերը տեսնելով՝ արցունքը մեր աչքերուն լեռները և դաշտերը ողբացնելով պիտի բռնենք գաղթականութեան ճամբան“։

(Կը շարունակուի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1902

Մրցումը նշանաբան է, ազգայնական ու քաղաքական հակամարտութիւնը — համաշխարհային, տիրապետող փաստ։ Տարիները չեն մեղմում նրան — ամբողջ դարեր են պէտք։ Միջազգային իրաւարար ատեանները, խաղաղասիրական, մարդասիրական և բոլոր նման հոսանքները դեռ ևս անզօր են զսպելու գազանին, որ մրափում է մարդկային բնութեան խորունկ ծալքերում։

Եւ, սակայն, մենք յոռետես չենք։ Մենք գիտենք, որ իրաւունքի աստիճանական յաղթանակը բիրտ ուժի վրայ՝ պատմութեան ծուծն է, նրա պահանջը։ „Ցառաջադիմութիւնը“ անժխտելի իրողութիւն է, միայն թէ այսօր նա պայմանաւորուում է տիրող տնտեսական յարաբերութիւններով, ուր անհատի կամքը գրեթէ ոչինչ է, ուր դասակարգային շահն է գերիշխող։ Կապիտալիզմը նախագահում է համաշխարհային էւոլիւցիային։ Նրա քմահաճոյքը տիրական օրէնք է. մի տեղ նա ճնշում է ժողովուրդների ազատութիւնը, մի այլ տեղ եռանդով պաշտպան է կանգնում այդ ազատութեան, բայց ամէն տեղ էլ նա ղեկավարում է իր սեփական շահի դաւանանքով։

Մենք դիտեցինք անցեալ տարուայ ընթացքում, թէ ինչպէս կապիտալիստական քաղաքակրթութեան կլասիկ ներկայացուցիչը՝ Մեծ Բրիտանիան՝ հակառակ իր ազատամիտ տրադիցիաներին, հակառակ տիեզերական ցասման աղաղակներին՝ խլեց մի ժողովրդից նրա նուիրական անկախութիւնը և ենթարկեց նրան իր տիրապետութեան։

Մենք տեսանք նոյն անցեալ տարում, թէ ինչպէս կապիտալիստական ամենաատելի բռնապետութիւնը՝ Ռուսաստանը՝ միջամտեց յօգուտ մի թշուառ, հարստահարուած ժողովրդի, — Մակեդոնիայի, որ հեծում է թիւրքաց իշխանութեան տակ։

Զուգադրութիւնը հրահանգիչ է. երկու պետութիւններն էլ կատարելով իրենց էութեանը միանգամայն հակառակ գործողութիւններ՝ հնազանդուում էին երկուսն էլ Շահի գերագոյն սկզբունքին։

Նոյն նկատումով էր, որ միւս պետութիւնները ևս յարեցին Ռուսաստանի առաջարկութեան։ Անգամ Գերմանիան, որ վերջին տարիներս ոչ մի ջանք չի խնայում Աբդիւլ Համիդին սիրաշահելու, ստիպուած եղաւ իր դեսպանի միջոցով լուրջ զգդարարութիւն անել Եըլդըզի

բանաւորին։ Բալկանները փոթորկեալ էին, իսկ կապիտալիստակապիտալիստները գոսկում են պատերազմից։ Նրանցից երաքանչիւրը ձգտում է—հեռաւոր ու մերձաւոր արևելքում—խաղաղ ճանապարհով նուաճումներ անել, բայց և ամէն կերպ խոյս է տալիս ընդհարումներից, որոնք սովորաբար աղետաբեր են լինում թէ յաղթողի և թէ յաղթուողի համար։ Այն պետութիւնները, որոնք այսօր մոլեռանդ պաշտպաններն են տաճկական statu quo-ի, վաղը երբ դէպքերը կը հարկադրեն նրանց, պատրաստ կը լինեն—յանուն խաղաղութեան, յանուն իրենց շահերի—ամենակծու լեզու բանեցնել իրենց „հովանաւորեալի“ մօտ։ Այդ են թելադրում մեզ բալկանեան պնդքերը, Գերմանիայի, Աւստրիայի և Ռուսաստանի դիրքը։

Մակեդոնական խնդիրը տարաւ վերջին կիսում քաղաքական աշխարհի հրատապ խնդիրն էր։ Երբէք երկիրը այնքան լայն ուշ խորը չէր ալէկոծուել։ Լցուել էր համբերութեան բաժակը և մակեդոնացին, որ մինչ այն ստրկի համբերութեամբ կրել էր իր լուծը, սիրով սկսեց ձայնակցել ռազմի աղաղակներին։ Ապստամբութիւնը պայթեց, դիպլոմատները իրարու անցան։ Ռուսաստանը ամենից աւելի „յուզուեց“։ Ցարի կառավարութեան պաշտօնաթերթը հրատարակեց մի շրջաբերական, որի լեզուն, տօնը յիշեցնում էին Աղեքսանդր II-ի թագաւորութեան վերջին շրջանը։ Դող ընկաւ Մարդասպանի սիրտը. նա չէր սպասում։ Երկիւղը կրկնապատկուեց Եըլդըզի մէջ, երբ մինիստր Լամսդորֆի ճանապարհորդութիւնը ծանուցուեց։ Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան ղեկավարը գալիս էր խորհրդակցելու կոմս Գոլուխովսկու հետ, որպէս զի ընդհանուր ջանքերով—համաձայն 1897-ի ծանօթ դաշնագրին—փութան հանգցնել հրդեհը Բալկաններում և փրկել Տաճկաստանի statu quo-ն։

Այն օրից դիւանագիտութիւնը և բոլոր երկրների մամուլը եռանդով արծարծում են ռէֆորմների խնդիրը Մակեդոնիայում։ Եւ մենք տակաւին անորոշութեան մէջ ենք։ Ամենահակասական լուրեր են շրջում հրապարակի վրայ. ոմանք տարուելով անհիմն լաւատեսութեամբ՝ խօսում են արդէն ինքնավար Մակեդոնիայի մասին. ուրիշները—աւելի սկեպտիկ—տրամադիր են կարծելու, որ չեռը մուկ պիտի ծնէ, որ Ռուսաստանի գրեթէ սպառնական շրջաբերականը, երկու լիազօր մինիստրների տեսակցութիւնը և այնքան աղմուկը մէկ կէտի պիտի յանգին—այն է՝ սուլթանի կառավարութեան պիտի յանձնարարուի որոշ վարչական ռէֆորմներ մտցնել Մակեդոնիայում։ 23-րդ յօդուածի, եւրոպական կոնտրոլի և նման բաների մասին խօսք չկայ առայժմ։

Մինչ այս մինչ այն՝ թիւրք կառավարութիւնը՝ անակնուելի պատահարներից երկիւղ կրելով՝ ընտրեալ է արդէն մի յանձնաժողով—մէկը հարիւրաւոր ֆիկտիվ յանձնաժողովներից—որը Ֆէրիդ փաշայի նախագահութեամբ պիտի մշակէ փարեներոգումներ եւրոպական Տաճկաստանի համար։ Յանձնաժողովը բաւական ժամանակից իվեր գործում է անսովոր „եռանդով“, բայց տակաւին խարխափումների մէջ է։ Ի՞նչ խօսք, որ այդ եռանդը չպիտի գործէ դրական ուղղութեամբ և որ վիլայէթների յեղափոխականները այնքան տխմար չեն, որ հաւատ ընծայեն սին խոստումներին։

Զարհուրելի, բաբեր ձմեռը քշել է հայդուկներին բարձր լեռներից. կազմ ու պատրաստ մնում է բանակը սպասողական դրութեան մէջ և եթէ թափուած մարդկային արիւնը դեռ ևս անզօր է դրդելու, ում հարկն է, դէպի վճռական քայլ—նա պատրաստ է, այդ մարտական բանակը, առաջիկայ գարնան, աւելի մեծ թափով նետուել կռուի դաշտ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍԱՒԹԻՒՆ

* * *

Ստորև համառօտիւ կ'արտատպենք L'Européen շաբաթաթերթի 55-րդ թիւին մէջ տպագրուած պ. Ա. Լըռուա Պոլիէս յայտնի հրապարակագրի մի յօդուածը՝ „Ի՞նչպէս պետութիւնները կրնան միջամտել Արևելքի մէջ—Կոչ խաղաղութեան բոլոր բարեկամներուն“։

Ցարգելի հրապարակագիրը կոչի ընդհանուր կծու ակնարկ մը ձգել բոլոր ոճրագործ և անպատասխան դէպքերուն վրայ, որ ամէն օր Թիւրքիա կը կատարուին, և որոնց պատճառած զգւանքը գինքը խորապէս յուզած են։

„Արեւելքը՝ խաղաղացնելու պարտականութիւնը կ'ինայ եւրոպական պետութիւններու կամ ժողովուրդներու վրայ, ոչ թէ քրիստոնեայ կամ քաղաքակրթուած ըլլալուն, այլ պարզապէս իրենց ապահովութեան համար։ Որովհետեւ եթէ այսպէս մնան շարունակեն հարստահարութիւնները եւ չարդերը, անխուսափելիօրէն տեղի պիտի տան Մակեդոնիոյ եւ Հայաստանի մէջ ընդհանուր ապստամբութեան, որ կրնայ ծագիլ քիչ ժամանակէն՝ նոյնիսկ կարելի է եկող գարնան՝ եւ խիստ վտանգել ընդհանուր պատերազմի մը վախով եւրոպական խաղաղութիւնը...

Ինչպէս յայտնի է, վերջերս մէկ քանի պետութիւններ՝ Ռուսիա, Աւստրիա եւ Փրանսա, մօտալուտ վտանգէն յուզուած, դիմումներ ըրած են Դրան, բարւոքելու համար Մակեդոնիոյ սրտաճմլիկ վիճակը։ Սակայն սոյն երկիրը հանդարտեցնելու, հետեւաբար Եւրոպայի խաղաղութիւնը ապահովելու համար, բաւական չեն միայն պարզ դիմումները եւ աւելի ազդու միջոցներու պէտք է դիմել... Ամէնքս ալ, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ եւ Հայաստանի ժողովուրդները, շատ լաւ գիտենք, թէ ինչ արժէք ունին սուլթանի խոստումները։ Բոլոր չարդերը, զարհուրելի հարշարանքները, անմեղ աղջիկներու զոհութիւնը կամ անոնց վրայ կատարուած գազանաբարոյ բռնութիւնները, հարիւրաւոր գիւղերու կործանումը եւայլն եւայլն, վերջապէս ասոնց նման դէպքերը՝ հափէն աւելի դասեր տուին Թիւրքիոյ ժողովուրդներուն, որոնք հիմա խիստ պարզօրէն գիտեն, թէ ինչ է վերապահուած՝ Եըլդըզէն՝ բղխող բարեհաճ քրոջով մը ծածկուած իրաւէներուն տակ։ Որով, զանոնք ապահովցնելու համար՝ ոչ բարենորոգումների լուրերը, ոչ աւ պաշտօնեաներ փոխելու խոստումները բաւական չեն։ Միայն վճռական միջոցներու իրագործումը կրնայ անոնց յոյս մը տալ։ Նոյնիսկ Միտհատ փաշայի անցողական սահմանադրութիւնը, շատ աւելի պաշտպանութիւն մը ներկայացուցեր քրիստոնեաներուն համար, թէեւ Երիտասարդ-Թիւրքերուն միամիտ հաւատարմութիւնը՝ զայն իբր գերագոյն ձեռնարկութեան մը մէջ կը ներկայացնէ եւ արդէն սուլթանն ալ իր մասնաւոր խնամքով զայն անյայտացուցած է։

Ուրեմն միակ եւ ապահով միջոցը կը մնայ Պերլինի դաշնադրութեան իրագործումը։ Եթէ իրաւ յիշեալ բարենորոգումները գործադրել տալ կ'ուզեն՝ իբր միակ ազդու միջոց կ'առաջարկենք արեւելեան խնդիրները լուծելու համար՝ եւրոպական հսկայաժողովի մը գումարումը, զոր ուրիշ անգամ ալ հոս նկատեր տալու առիթն ունեցանք։ Այդ առաջարկութիւնը՝ պաշտպանուեցաւ ռուս, անգլիական, աւստրիական եւ իտալական մամուլի մեծամասնութեան կողմէ։ Սոսկ ճնշմանական լրագիրները, կարծէք՝ հրամանի մը համաձայն՝ առոչպաղպակ քիչ նպաստաւոր հանդիսացան։

Ինչ որ ալ ըլլայ՝ հակառակ Պերլինի դաշնադրութեան դէպի ճնշաւածները, չի պիտի կրնայինք աւելի երկար՝ ատեն անվիշտ՝ վիճակները մնալ Հայաստանի եւ Մակեդոնիոյ ցաւերուն։ Եւրոպայի մէջ որքան չտարաձայնութիւն որ ունենայ գերմանական կայսրութիւնը, դեռ Եւրոպա չէ։ Արդէն նրէտէի օրինակն ալ մեզ ցոյց կուտայ որ դեռ Եւրոպայ կարիր է մինակ գործել Արեւելքի մէջ՝ առանց Գերմանիոյ հրամանին եւ աջակցութեան։ Եւ եթէ գերմանական դիւանագէտներու վարանումները առայժմ դժուարութիւններ տալ կը թուին՝ եւրոպական հանաժողովի մը գումարելուն, միթէ կարելի չէ՞ ուրիշ միջոցով նոյն նպատակին հասնիլ եւ վերջապէս ազատել Արեւելքի շահերը, հետեւաբար

ապահովել նպեւ Եւրոպական խաղաղութիւնը՝ պալքանեան ապստամբութեան մը վտանգէն: Ահա այս կէտի վրայ է որ կուզեմ՝ ուշադրութեան հրաւիրել բոլոր քաղաքագէտները, խաղաղութեան բարեկամները եւ նաեւ ամէն անոնք որ միջազգային իրաւունքներով կը զբաղին:

Արեւելքի հարստահարուածները, որոնց ազատութեան համար Եւրոպական համաժողովի մը իրագործումը կը մաղթենք, Պերլինի դաշնադրութենէն ատենական իրաւունք մ՚ունին բողոքելու: Ոչ Թիւրքիա, ոչ ուրիշ ոեւէ պետութիւն չի կրնար համարձակիլ զայն ժխտել կամ անզօր համարել՝ քանի որ Եւրոպա իր պետութիւններու ստորագրութիւններով զայն վաւերացուցած եւ անոնց տուած է:

Սակայն այդ ժողովուրդները չունենալով ինքնավար պետութիւն՝ հետեւաբար դիւանագիտութեան եւ միջազգային իրաւունքի առաջ՝ ալ համարուած են այնպէս՝ ինչպէս եթէ գոյութիւն չունենային՝ չեն կրնար, այն փառաւոր իրաւունքը ունենալով հանդերձ, իրենց պահանջները լսելի ընել տալ: Ուրեմն, ինչպէս կը տեսնուի, որեւիցէ միջոց չունին իրենց օրինաւոր իրաւունքները պաշտպանելու համար, եւ Պերլինի դաշնադրութեան ամենէն աւելի վաւերական եւ ճշդուած պայմաններ ալ իրենց մոռ՚ մնռած տառեր կը մնան: Բայց ինչ որ Մակեդոնիոյ եւ Հայաստանի քրիստոնեաները չեն կրնար ընել, միթէ՞ ուրիշներուն ալ անկարելի է: Եւրոպական պետութիւնները, մանաւանդ անոնք որ յիշեալ դաշնադրութիւնը ստորագրած են, արդեօք իրաւունք չունի՞ն պահանջելու Թիւրքիայէն որ՝ վերջապէս իր խոստումները կատարէ: Եւ ասոր համար ալ անհրաժեշտ՝ չէ որ բոլոր պետութիւնները համաձայն ըլլան միատեղ գործելու:

Կարելի է ինծ հարցնեն, թէ ի՞նչպէս զանոնք գործադրել տալու է: Մի՞թէ զէնքերու միջոցաւ: Այդ պարագային՝ զէնք նկատէը յետագայ վտանգները, նամանաւանդ եթէ առանձին պիտի ըլլայ կռիւը: — Ոչ, պիտի պատասխանենք, երբէք զէնքի ուժով չէ: Կը կարծենք որ երբ Պերլինի դաշնադրութեան 23 եւ 61-րդ յօդուածները գործադրել տալու խնդիրը հրապարակ նետուի մէկ կամ աւելի պետութիւններու կողմէ, աւելի պարզ եւ ապահով միջոց մը կայ, իրաւարարութիւնը, զոր ամէն տեղ խաղաղութեան բարեկամները կը յայտարարեն: Անտարակոյս, ուժի միջոցաւ ստիպել Թիւրք կառավարութիւնը կատարել տալու այս ու այն պայմանները, իրեն հետ կռիւ փորձել է: Բայց այդ կռուին առիթ չտալու համար, ո՞վ կրնայ արգիլել իրաւարարութիւնը: Նամանաւանդ որ խնդիրը կը կայանայ դաշնադրութեան մը գործադրութեան մէջ, որուն ամենաբնական միջոցը նա է: Որով, եթէ Գրանսա կամ Ռուսիա, Իտալիա կամ Անգլիա՝ առանձին կամ միացած՝ այս կերպով միջամտել ուզեն, չենք կարծեր որ Թիւրքիան միացած ըլլալով Լահէի վրայ, իրեն թոյլ տայ զայն մերժել:

Խաղաղութեան բարեկամներուն եւ իրաւարարութեան համար կազմակերպուած ընկերութիւններուն կը թողունք մտածել մեր առաջարկած միջոցի վրայ: Դալով մեզի՝ անոր համոզուած կողմնակիցներն ենք. նա մեզ համար ամենապարզ եւ արդար միջոցն է, ժողովուրդներու կամ պետութիւններու մէջ ծագած նիկկարակութիւնները լուծելու համար, թէեւ միջամտելու հին եղանակը դժբախտաբար չէ յաջակցուած ամէն տեսակ խնդիրներ լուծելու, մասնաւորապէս ամենէն աւելի ցաւալիները, թէեւ որեւիցէ օգնութիւն չը վերապահէր ազգութիւնին կորսընցուցած հարստահարուած ժողովուրդներու, թէեւ նա զերի է սրի ծայրով զրուած դաշնադրութիւններու, չի կրնալով ուժի միջոցաւ կատարուած անիրաւութիւնները դարմանել, սակայն Արեւելքի կեղեքուող ժողովուրդները բախտաւորութիւն ունեցած են Պերլինի դաշնադրութեան մէջ պաշտօնական իրաւունքներ ձեռք բերելու եւ առանց օգնութեամբ կարող են փրկութիւն մը գտնել: Ուրեմն պոյն դաշնադրութիւնը ստորագրող պետութիւններու շարքին մէջ մեթէ չի գտնուի՞ մէկը, որ հարմարակի անոնց օգնել, հայթայթելով՝ պէտք եղած միջոցները իրենց իրաւունքները յարգել տալու համար: Եւ այդ միջոցն ալ պարզ է՝ իրաւարարութիւնը, որ փոխանակ պատերազմ յառաջ բերելու, կը վերջանայ խաղաղութեամբ:

Պահելի է հոս ալ մեզ առարկեն որ նոյնիսկ եթէ մէկ քանի պետութիւններ առաջնորդուած միջոցներուն վրայ մեր ուզեն, չէ՞ որ վերջնական վերջ գործադրել տալու է, եւ հոն ալ դժուարութիւնները:

Անշուշտ անելի դիւրին է վճռել քան կատարել տալ: Բայց նոյն Պերլինի դաշնադրութեան մէջ որոշուած են նաեւ իր գործելու կերպերը՝ Եւրոպայի միջամտութիւնը եւ հսկողութիւնը: Արդէն լաւ համոզուած ըլլալու ենք որ, հայկական եւ մակեդոնական խնդիրները լուծել կարելի չէ առանց Եւրոպայի հսկողութեան եւ վերաքննութեան՝ հանդուրժելի դաշնադրութեան պահանջներուն: Մնացած բոլոր միջոցներն ապարդիւն են: Ահա այս կէտն է որ պետութիւնները կ՚երեւին մոռնալ այն ատեն, երբ Ռուսաստանի հետ սուլթանէն բարենորոգումներ կը պահանջեն Մակեդոնիոյ համար: Որքան որ պետութիւնները չի պիտի համարձակին Պերլինի դաշնադրութիւնը գործադրել տալ՝ թոյլ տալով որ Եըլդըզի պետը զիրենք խաբէ իր արհեստական խօսքերով՝ սխալ քայլ մ՚եւս առած պիտի ըլլան, կրկին պատճառ դառնալով Արեւելքի թշուառութեան եւ միեւնոյն ատեն Եւրոպայի խաղաղութեան վտանգելուն՝:

ԼՈՒՐԵՐ

* * *

Հայկական պրոպագանդի ժամանակագրութիւնը հարբստանում է մի քանի նոր կոնֆերանսներով, որոնք տեղի պիտի ունենան Եւրոպական կարեւոր կենտրոններում, նախաձեռնութեամբ „Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան“: Յունուարի 20-ին Բերլինում կը խօսի դոքտ. Պաուլ Օրբաք: Փետրուարի սկզբներին Պարիզում տեղի կ՚ունենայ մի մեծ միտինգ, մասնակցութեամբ ականաւոր ֆրանսիացի հայասէրների: Նոյն փետրուար ամսին հռչակաւոր կրիտիկոս Գէորգ Բրանդէս պիտի խօսի Բերլինում, իսկ „Պրօ Արմէնիա“-ի խմբագիր՝ Պիէռ Կիառ՝ Ժընէվում, երկուսն էլ Հայաստանի և Հայոց Հարցի մասին: Այնուհետև տեղի կ՚ունենայ յայտնի հրապարակախօս Ֆրանսիս դը Պրէսանսէի կոնֆերանսը Լիոնում: „Միութեան“ Լիազօր Կոմիտէն որոշել է այդ դասախօսութիւնները տպագրել առանձին բրոշիւրներով՝ զանազան լեզուներով՝ Եւրոպայում՝ տարածելու համար:

* * *

Վերջին տարիների ամենանշանաւոր թիւրք էմիգրանտներից մինը — Տամատ Մահմուտ փաշան՝ սուլթանի փեսան և նախկին մինիստր, փախած Կ. Պոլսից՝ Համիդի հետ ունեցած տարաձայնութիւնների պատճառով, մեռաւ Բրիւսէլում յունուարի 18-ին: Նախկին մինիստրի փախուստը Կ. Պոլսից՝ մեծ աղմուկով լսեց Եւրոպայում, մանաւանդ Ֆրանսիայի մէջ: Նրա կապերի, եռանդի և տեղեկութիւնների վրայ մեծ յոյսեր կային: Տարաբախտաբար ոչ մի գործնական արդիւնք չեղաւ: Մահմուտ փաշան մինչև վերջ էլ սուլթանի հետ մնաց անհաշտ, և անյողդողդ. չ՚ընդունեց իր կնոջ եղբօր առաջարկները և շարունակեց պտտել Թիւրքիայից դուրս, զանազան ծրագիրներով: Այդ ծրագիրներից մէկն էր՝ անցնել Երիտասարդ Թիւրքերի գլուխը և կապ հաստատել Հայ յեղափոխականների հետ: Նոյն այդ նպատակով երկու տարի առաջ Ժընէվում, և ապա Եգիպտոսից յարաբերութեան մէջ մտաւ „Դրօշակ“-ի խմբագրութեան հետ: Այդ ծրագիրները, ինչպէս և Լօնդոնում սկսած նրա լրագիրը աջողութեամբ չպսակուեցին, և Մահմուտ փաշան մեռաւ, համարեա մոռացած քաղաքականապէս, բայց հանդարտիմ իր թշնամութեան դէպի Եըլդըզ Քեօշքի բռնաւորը:

* * *

Բրիւսէլի միջազգային սոցիալիստական բիւրօն, կազմուած բոլոր երկրների սոցիալիստական պատգամաւորներից՝ այս ամառ Զուրիխում նիստի գումարելով՝ միաձայն ընդունեց Ժան Ժորէսի առաջարկած հետևեալ բանաձևը.

«Սոցիալիստական միջազգային Բիւրօն գտնում է անհրաժեշտ, որ միջազգային քաղաքականութեան ինչիրները ուսումնասիրուին այնպէս ճշդօրէն եւ աւելի խնամքով՝ բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնների եւ նոյնիսկ միջազգային Բիւրոյի կողմից:

Նա յայտարարում է, որ շատ շահեկան կը լինէր, եթէ առաջիկայ կոնգրէսին Ամստերդամում՝ բոլոր երկրների սոցիալիստ կուսակցութիւնները ներկայացնէին զեկուցումներ միջազգային դրութեան, ժողովրդային նախապաշարումների եւ կառավարական կոմբինացիաների մասին, որոնք կարող են վնասել իրազեկութեանը, ապա նաեւ այն լաւագոյն միջոցների մասին, որոնցով կարելի է լուծել հակառակութիւնները եւ արգելել ընդհարումները ժողովուրդների միջեւ»։

* * *

Ֆրանսիայի մէջ վերջերս կատարուած՝ սենատի և պարլամենտական բիւրոյի ընտրութիւնները որոշ հետաքրքիր քրութիւն են ներկայացնում և մեզ համար։ Սենատի ընտրութիւններին թեկնածու էր դրուած, իմիջի այլոց, արտաքին քաղաքականութեան նախկին մինիստր Հանոտօ։ Ընտրողները ճնշող մեծամասնութեամբ տապալեցին Աբդիւլ Համիդի տիրահոչակ փաստաբանին, որը այլևս պիտի թէ վերադառնայ իբրև մինիստր։

Միւս կողմից՝ պատգամաւորական ժողովի բիւրոյի ընտրութիւններին պարլամենտի փոխ-նախագահ ընտրուեց «Պրօ Արմէնիա»-ի խմբագրական մասնաժողովի անդամ և հայոց հարցի պերճախօս պաշտպան՝ Ժան Ժորէս։ Այդ ընտրութիւնը — որ համարւում է սոցիալիստական գաղափարի փայլուն յաղթանակ — մեծ յուզում է առաջ բերել եւրոպական մամուլի մէջ։

* * *

Die Information-ի Կ. Պոլսի թղթակիցը գրում է (17 յունուար).

«Մայրաքաղաքի հայ շրջաններում գոհունակութեամբ են արձանագրում այն փաստը՝ որ տարին անցաւ Հայաստանի մէջ առանց մեծ կոտորածների։ Այդպէս եղաւ շնորհիւ Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի, մանաւանդ առաջինի շատ թէ քիչ կորովի միջամտութեանը։ Ցաւալի է, որ դրութիւնը Մուշի կողմերում մի բոպէ վերին աստիճանի անհանգստացնող էր։ Զորս քիւրդ ցեղեր՝ կանոնաւոր զօրքերի հետ շղթայով պատել էին Սասուն լեռնավայրը՝ ֆէդայիների բանակին տիրելու և Սասունի ըմբոստներին մի անգամ ընդմիշտ ոչնչացնելու համար... Եւրոպակաղ երեք հիւպատոսական գործակալների գալուստը բարերար ազդեցութիւն արաւ մշտական սարսափի տակ հեծող ազգաբնակութեան վրայ։ Սասունից եկած վերջին տեղեկութիւնների համեմատ՝ քրդերը և չէրքէզները յետ են վերադարձել և ամենայն հաւանականութեամբ՝ ձմեռը այդ կողմերում խաղաղ կ'ընթանայ։ Երբ ասւում է «խաղաղ», չպէտք է լաւատես եզրակացութիւններ հանել դրանից։ Թշնամութիւնը մեծ է Հայաստանում, մանաւանդ այս դաժան ձմրան ժամանակ։ Բացի այդ՝ կատարւում են մասնակի բազմաթիւ սպանութիւններ և բանտերը լի են բռնութեան զոհերով»։

* * *

Մակեդոնական երկու կուսակցութիւնների միացման մասին տարածուած լուրերը չեն ճշդւում դժբախտաբար։

Ահա թէ ինչ են հեռագրում Temps լրագրին Սոֆիայից (27 յունուար)։

«Մակեդոնական երկու ֆրակցիաները միացնելու փորձերը իմերջով վիժեցին՝ անձնական մրցումների պատճառով։ Հետաքրքրական է, որ այդ նոր թիկնադարձութիւնը իրենց նախկին դիրքի մէջ դրեց՝ Միխայլովսկուն՝ ու Զօնչեվին մի կողմից, Սարաֆովին՝ միւս կողմից։ Այս վերջինը՝ մակեդոնական ներքին կազմակերպութեան հետ ներդաշնակ՝ քարոզում է վերստին ապստամբութիւն, մինչդեռ Միխայլովսկի խորհուրդ է տալիս սպասել ռէֆորմների արդիւնքին։ Դժբախտաբար (*), ներքին կազմակերպութիւնն է, որ ամենակարող է բուն Մակեդոնիայում»։

* * *

Եւրոպական թերթերին հեռագրում են Կ. Պոլսից, որ յունուարի 6/19-ին Գում Գափուի մայր եկեղեցում, սպանութեան փորձ է եղել Օրմանեան պատրիարքի դէմ։ Երկրորդի մի հայ երիտասարդ մի քանի անգամ ատրճանակ է արձակել պատրիարքի վրայ և վիրաւորել է նրան աջ ուսից։

ԹԵՐԹՕՆ

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԱՊԱՆՔՆԵՐ

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՅ

(Թարգմ.)

—

Տաք, գեղածիծաղ արեւկայ։ Մեղմիկ քամիի մը տակ ծովը կը շարժի, քնացող հսկայի մը շնչելուն նման։ Հանդարտ ու ապահով կը սահի մեր մակոյկը ոսկեշող կոհակներու մէջէն... Ընդարձակութիւն... անհունութիւն... Հեռուն՝ հին, կիսաւեր ամբարտակ մը, որուն վրայ մենք կը դիմենք։ Ուժգին կը զարնուին ալիքները քարաշէն պատնէշին և խայտալով կը գահավիժին լայն ծերպերուն ու ճեղքերուն մէջէն։

«Ծովը կ'ատէ ամէն պատուար», կը նկատէ ընկերս՝ ծերունի, արեւակէզ նաւազ մը։

«Վաղուց է որ ամբարտակը խրամատուած է», կը հարցնեմ ես, ակամայ ցնցուած ալիքներու հզօր ուժէն, որոնք կրնային այսպիսի վիթխարի քարակոյտեր քշել տանիլ։

«Ամէն պարագայի մէջ վաղուց է», կը պատասխանէ ուղեկիցս մտախոհ, «գիտէք նաւազներու հին աւանդութիւնը ծովուն ժայռերու դէմ մղած կուին մասին։ Եթէ կ'ուզէք, պատմեմ Ձեզի»։

* * *

Ազատ ու անկաշկանդ էին ծովուն ալիքները, ինչպէս թռչունները օդին մէջ... Մայր-քամին կ'օրօրէր վիրենք իր քնքուշ մեղեդիներով և զարթ ու անհոգ կը թաւալէին անոնք դէպի անսահման հեռաւորութիւնը։ Սակայն սոսկալի բռնապետ Մարդը շատ տեսաւ ալիքներուն իրենց երջանկութիւնը։ Վճռեց անոնց ազատութիւնը կապտել, ալ հպարտ ու անարգել պէտք չէ թաւալէին հզօր, անդնդախոր ծովուն վրայ, ալ պայծառ արեւուն ու կապուտակ երկնքին հետ պէտք չէ խառնուէին...» Ան փոյթեռանդ ստրուկներ ճամբայ հանեց, որ երկրի ծոցէն պաղ ժայռեր պեղեն ու ծովուն խորքը ընկղմեն...

Ծովը հրճուանքէն կ'ոստոստէ... Ուրախ կը դիտեն ալիքները ինչպէս ժայռերը ծովուն անդունդը կը խորասուզին... կ'ոստոստեն, վիրաւ կը հրմշտկեն, կը խնդան, մրմռացող ժայռերը կը համբուրեն, հոս ու հոն կը թաւալին, ի՜նչ փառաւոր կեանք...

„Ցուրտ երկրին ծոցէն մռայլ հիւրեր եկած են մեզի“, կը ցնծան անոնք, „աղմկոտ երգերով ընդունինք զիրենք, խանդակաթ գիրկընդխառնումներով ու փաղաքշանքներով տաքցընենք զիրենք... Միասին զբօսնինք ծովուն մէջ, միասին գովաբանենք լոյսն ու ազատութիւնը“...

Զարթեան երիտասարդ ալիքները։ Միայն Մայր-քամին և Հայր-վիշապհողմը չար սուլոցներով կ'ընդունին հիւրերը։ Խոժոռադէմ կը նային ժայռերուն։ Բայց ժայռերը ծովուն մէջ կը սուզին, քովքովի սեղմ կը տեղաւորուին և ահա հաստատուն պարիսպ մը վեր կը բուսնի, որ ալիքները սեղմել, անոնց ազատ ճամբան փակել կը սկսի...

Ալիքները անհանգիստ կ'ըլլան... Սարսափած կը դիտեն բարձր, մթին պատերը, առաջին անգամն ըլլալով իրենց ճամբան կը փակի... Ու երկչոտօրէն իրենց ուղին հետևելով, կուրծքովին ժայռերուն կը զարնուին... Հեծելով ետ կ'ընկրկին... ժայռերը պաղ են, անմատչելի...

Ու ծովը յորձանքներ կը հանէ... Ալիքները ահաբեկ խոյս կուտան, մռայլ ժայռերուն դէմ կուրծքերնին կը փեռեկեն... Հեծեծանք մը կը փրթի ծովուն վրայ... գաւթի ալիքները կը տխրամածին։

„Դաւաճանութի՜ւն, դաւաճանութի՜ւն“, կը գոչեն, „իբր բարեկամներ ընդունեցինք զիրենք... Ազատութի՜ւնը, Ազատութի՜ւնը մեզմէ կապտեցին“...

Կուլայ Մայր-քամին... մունչելով մթին պատերուն դէմ կը նետուի Հայր-վիշապհողմը...

„Ո՛վ ժայռեր, ո՛վ մոլեգին ժայռեր. երբեմն դուք ալ ազատ էիք. երբեմն դուք ալ ազատ կուրծքէ կը շնչէիք։ Ինչո՞ւ, ինչո՞ւ մեր տղայոց ազատութիւնը կապտեցիք“։

Պաղ ժայռերը դէմքերնին կը խոժոռեն։

„Մենք բարձրագոյն իշխանութեան մը կը հնազանդինք, կը կապտենք երբ ան մեզի կապտել հրամայէ“։ Կը պատասխանեն անոնք խուլ հեծեծանքով մը և մռայլօրէն ծովուն վրայ կը հակին։

Հապճեպ կը հեռանայ Մայր-քամին, հապճեպ կը հեռանայ Հայր-վիշապհողմը, սուլոցներով, ոռնոցներով հեծկլտուքներով։ Ալիքները կը կանչեն, չարաշուք լուրը գուժելու անոնց։

„Ո՛վ ալիքներ, ո՛վ խեղճ ալիքներ, կորսուած, կորսուած է Ազատութիւնը, ստրուկներ էք այսուհետև“։

Ու փութով կը մեկնին հոնկէ։

Հին ուժեղ ալիքները ծովուն խորը կը գլորին։ Մայր-քամին չի սթափեցներ զիրենք, Հայր-վիշապհողմը չի արթնցներ զիրենք... Սակայն երիտասարդ ալիքները կը թաւալին մռայլ... Ա՛լ ոչ ծիծաղ կը լսի, ոչ երգ նախկին ազատութեան վրայ, և արևը այնչա՜փ աղօտ երկնքի վրայ ու երկինքը այնչա՜փ մռայլ, այնչա՜փ գորշ... Երիտասարդ ալիքները՝ դժնդակ ստրկութենէն ուժաթափ՝ շատ քիչ անգամ կը համարձակին թշնամիին դէմ ընդհանուր պատերազմի։ Շղթայապիրկ կը նետուին սրածայր ժայռերուն վրայ, սրածայր ժայռերը չեն դողար և յանդուգն պատերազմիկներու ջախջախուած կուրծքերը կ'արիւնին...

Ծովը կուլայ...

Անցան տարիներ... շատ տարիներ անցան... Շատ ալիքներ իրենց կուրծքերը պաղ ժայռերուն վրայ ջախջախեցին... Երթալով աւելի և աւելի մռայլութիւն շրջապատեց... Ալիքները խռովեցան։

„Պիտի սպասենք, ուժ պիտի հաւաքենք“։

Տարիներ անցան։ Երիտասարդ ալիքները զօրացան։ Ճեպընթաց սուրհանդակներ ղրկեցին ծովուն ամէն կողմերը, քնացողները արթնցնելու, բոլոր ալիքները ժայռերուն դէմ պատերազմի կանչելու...

Ճեպընթաց սուրհանդակները ծովուն անդունդները իջան ծեր ալիքներուն քով, ծեր ալիքները պատերազմի կանչելու։ Բայց ծեր ալիքները մռայլօրէն իրենց սպիտակահեր գլուխները թօթուեցին.—

„Ուժ չունինք, զօրութիւն չունինք, ի՞նչպէս կրնանք պատերազմիլ, ի՞նչպէս կրնանք ժայռերուն հետ չափիլ“։

Մրրկավար մեկնեցան սուրհանդակները ծնողները գտնելու։ Մայր-քամին և Հայր-վիշապհողմը կանչելու։ Ծովուն վրայ կը փնտռեն — չկան. լերան կիրճերուն մէջ կը գտնեն ծնողները։

„Խոնարհաբար կ'ողջունենք ձեզ, ո՛վ ծնողներ, ալիքներուն կողմէն իբր ճեպընթաց սուրհանդակներ կուգանք ձեզի, թողուցէք նեղ լեռները, շուտով դէպի ծովը թռէք, փշրեցէք ամօթալի շղթաները, որոնք մեր եղբայրները գերութեան մէջ կը պահեն... Բոցավառեցէք ծեր ալիքներուն մէջ կեանքի ոգին, ազատութեան պապակը։ Ահարկու բանակ մը ժողվեցէք և ամէնքը միասին ժայռերուն դէմ մղեցէք։ Կռիւը չի սարսափեցներ մեզ, մահը չի սարսափեցներ մեզ, միայն մեր եղբայրներուն ազատութիւնը կ'ուզենք փրկել“։

Մայր-քամին սիրտը սարսուռով մը բաբախել կը սկսի, Հայր-վիշապհողմին արիւնը կրակի պէս կը բորբոքի։ Սուրհանդակներուն խօսքը հին, բարի ժամանակները կը յիշեցնէ անոնց։

Սիրազեղ նայուածքներով կը շրջապատեն սուրհանդակները։ Լերան փապարներէն անհուն ծովուն վրայ կը հնչէ հզօր թնդիւնով իրենց ուրախ աղաղակը։

„Կուգանք, կուգանք, կուգանք, ազատութիւնը փրկել, ազատութիւնը փրկել։ Ոտքի ելէ՛ք, հզօր ալիքներ, խորտակեցէ՛ք ազատութեան կապանքները, տապալեցէ՛ք պատուարները“։

Հզօր կը հնչէ կոչը։ Քնացողները կ'արթնցնէ, ծերերը երիտասարդ կը դարձնէ, անոնց յանդգնութիւն ու քաջասրտութիւն կը ներշնչէ։

Ու ալիքները ոտքի ելան, ու ալիքները յառաջ թաւալեցան, մարտակոչին հնազանդ։

Խաւար գիշեր մը իջաւ ծովուն վրայ, սև ամպեր վար կախուեցան, երբ հզօր մարտակոչը հնչեց։ Արևելքէն մինչև արևմուտք, հարաւէն մինչև հիւսիս յառաջ փութացին ալիքները և ահարկու բանակներ խմբեցին...

Ցուսահատ յանդգնութեամբ մը երիտասարդ ալիքները ամենէն առաջ պատերազմի խիզախեցին... Կայծակի ու մրրկի պէս սուրացին ծովուն վրայ... Մայր-քամին կը մունչէր, Հայր-վիշապհողմը կ'որոտար... Պատերազմը սկսաւ։

„Ցառա՛ջ, արի կո՛հակներ, յաղթութիւն կամ մահ“։

Ռազմազարշ աղաղակով ալիքները կը մերձենան մռայլ ժայռերուն... մռայլ ժայռերը կը դողան։ Մօտ են արդէն ալիքները, երթալով աւելի արագ կուգան անոնք։ Կուրծքերնին դուրս ցցած յառաջ կուգան... Կուրծքովին ժայռերուն դէմ կը նետուին։ Ուշաթափ եա կ'իյնան... Արիւնով սրսկուած են ժայռերը, անվեհեր մարտնչողներու արիւնով... Կը հեծէ Մայր-քամին։

„Տղա՛յք, իմ սիրասուն տղաքս, արդէն առաջինները ինկան... Բայց եթէ մինչև իսկ դեռ շատերս չենք իյնալու ըլլան, ճզմեցէ՛ք այսօր թշնամին“։

Ծովը կ'եռայ։

Ինկածներուն տեղ թարմ կռուողներ կանցնին... Որչափ սարսափելի են անոնք, որչափ ուժով են։ Որոտալով ու մռնչելով կը խոյանան սրածայր ժայռերուն վրայ և մահուան միջոցին իսկ իրենց եղբայրները կուի կը հրաւիրեն... Հաստատ կեցած են ժայռերը։ Բայց մոայլ ու անվեհեր յառաջ կը թաւալին ալիքները, ու վերջ չունին, վերջ չունին սոսկալի ալիքները։

Հեծեծանքնե՞ր մռնչիւն ծովուն վրայ։ Հզօր առիւծներու՞պէս ոտքի ելան ծեր ալիքները երիտասարդներուն օգնելու։ Անոնց սպիտակ քաշերը կը ծածանին... շուրջանակի երկիրը կը դողայ... զարհուրելի ուժով մը ժայռերուն վրայ կը նետուին...

Արդէն թուղթ, աղօտ առաւօտ մը կը ծագի...

Դեռ միշտ անառիկ կը մնան ժայռերը...

Տակաւին կ'ոռնայ ծովուն վրայ Մայր-քամին, տակաւին ալիքները մոլեգնութեամբ յառաջ կը դիմեն, սրածայր ժայռերուն վրայ կոտրծքերնին ջախջախելու...

Սարսափահար կը փախչին մարդիկ։ Տիրագին կը դիտեն նաւազները, ինչպէս ալիքները անհաւասար կուին մէջ կը կործանին։ Կսկիծէն սրտերնին կը ճմլի ու կուլան անոնք՝ մոայլ մարդերը՝ և կ'աղօթեն, որ Աստուած կուին վերջ դնէ, ալիքներուն յաղթանակ պարգևէ։

Մինչև իսկ բռնապետ Մարդը, որ ժայռերը ծովը նետեց՝ կը սարսափի և իր կարծր սիրտը կը դողայ այսպիսի ցաւերու ու տանջանքներու հանդէպ։ Ո՜հ, որպիսի ուրախութեամբ պիտի ուզէր հիմա ժայռերը մէկդի առնել ու ալիքներուն իրենց ազատութիւնը տալ վերստին։ Սակայն շատ ուշ... Հիմա ալիքները ալ չեն լար, հիմա ալիքները ալ չեն աղերսեր։ Անոնցմէ շատ շատերը կորսուեցան — վրէ՞ժ ինկածներուն համար։ Եւ տխուր վճռականութեամբ մը՝ Մայր-քամիէն բորբոքուած՝ կը նետուին պսպղուն ժայռապատուարին վրայ... Շուրջանակի ամէնքը կը զգան — կամ պաղ ժայռերը ծովուն խորքը կը թափին և կամ ծովը դերեզմանոց մը կը դառնայ...

Անվեհեր, մահը արհամարհելով յառաջ կը քշեն... Ամէնքը միահամուռ յարձակում կը գործեն թշնամիին վրայ, ժայռերը կը դողան հզօր յարձակումին տակ... Ալիքներ կը մեռնին։ Եւ կը նահանջեն, ամէհի կատաղութեամբ մը կրկին ատելի թշնամիին վրայ նետուելու համար... Ամէն բան իրար կը խառնուի կուի զարհուրելի խուճապին մէջ... Հեծեծանք ու թնդիւն ծովուն վրայ... Եւ ծովը կարծես իր յատակէն վեր ամբառնալ ու երկնքին հետ միանալ կ'ուզէ...

Ու ժայռերը կը տապալին...

Միահաղոյն ընդհարումէն ընկճուելով, շունդալիր կը տապալին ծովուն խորքը, մեռած ալիքներուն քով...

„Կորսուեցէք, անարգ դիակներ։ կը մռնչէ ծովը վար նետուած ժայռերուն, հոս հանգստարանն է ազատութեան յանդուգն մարտիկներուն, հոս կը պառկին երիտասարդ ալիքները"։

Ծովուն յատակը կը բացուի և ամենախոր անդունդներուն մէջ կը տուգին ժայռերը անէծքներով...

„Մերն է յանցանքը... Ալիքներուն փառքի մեզի յաւիտենական նախատինք, ամօթալի գործին համար"։

Հիմա կը հիշեն անգամ ծովը թշնամիին բիրտ ուժը խորտակելու։

Ազատ կը թաւալին ալիքները ու ինկած նահատակները կը փառաբանին, որոնք իրենց կեանքով եղբայրներուն ազատութիւնը ետ գրաւեցին։

„Մեռածներուն փառք"։

„Ապրողներուն ազատութիւն"։

* * *

Նաւազը լռեց։ Ես նստած էի յափշտակուած այս հրաշալի պատմածքէն։

Լի երկիւղածութեամբ կը դիտէի ազատ ալիքները, որոնք ուժ ու յանդգնութիւն կը շնչէին։

Վերևս կապուտակ երկինքը, ներքևս անսահման ծովը, մայիսեան պայծառ արևուն լոյսովը ողողուն...

Հեռուն քաղաքին ժխորը, կուշտ, ինքնահաճ գոհացողութեան ծիծաղը, սև ծուխ, կօղակներու մտրակին շառաչը, շղթաներու շքխբրդցը և հեծեծանք, աղիողորմ հեծեծանք...

Ու յանկարծ թուեցաւ ինծի, իբր թէ հեռուն շատ հեռուն, կապոյտ ծովուն ետևը Մայր-քամին կ'ոռնար.

„Ո՛վ մարդիկ, ո՛վ արգահատելի, թշուառ մարդիկ"։

ԵԼԻՐԱՏԻՊԱՐԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Օր. Յուսիկից (Փրնէվ) 5 ֆրանք, ԲԸՌԻԳՆԻՑ (Պ. Ց.-ից) ֆէդայիների համար 40 ֆր., ԱՆՎԷՐԻՑ (Ն.-ից) 100 ֆր., ԲՐԱՑԼԱՑԻ „Գուրգէն" խմբից 100 ֆր. (ստացւած՝ Կիպրոս 6, Պիծակ 7, Ատրմանակ 5, Քարայը 5, Դարասորդի 7, Կայծակ 4, Քարիւղ 7, Աղբիւր 7, Կրգուզ 7, Դաշոյն 5, Ոմն 5, Ցաւակ 5, Ռումբ 7, Փայտուցիկ 4, Քարափ 6, Կայծ 1, Ապտակ 5, Մրտրակ 5, Սաժկոնեան 5, Սերկի 2), ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱՑԻՑ Ն. Ղ. 1000 ֆրանք։ Գումար 1215 ֆրանք։

Աւստրիայի Լ. քաղաքից՝ պրոֆ. Անտ. 50 կրօն, Նիկօր. 30, Բօղդ. 25, Բոհոս. 25, Սեֆեր. 25, Օհ. 12, Սարգիս. 10, Ազոպ. 20, Սիմ. 10, տիկ. Հախ. 20, դօրտ. Բոհ. 20։

ԲԱՆ. քաղ.-ից՝ Բոհ. եղբ. 60 կրօն, ԿՕԼՕՄ. ք.-ից՝ Մարտիր 20 կրօն, Թօրոս. եղբ. 30, Բոհոս. 10, Հ. քաղաքից նորակազմ հայկական Verein-ից 200 կրօն։ Գումար 567 կրօն։

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կոմիտէն՝

Օգոստոսից-դեկտեմբեր 1902 թ. „Հայատ" իւ. 80 ռուբլի, Ջ հատ կուպոն 4. 75, Խանասորի առթիւ Ա.-ից 10, Խանասորի առթիւ Հ.-ից 22, Խ.-ից վիճ. մնց. 9, „Զանգ" խ. 30, „Վազգէն" խ. 30, „Կեանք" խ. 16, գրքերից 1, Բէկ-ից 100, Նիկ-ից 10, Բ-ից 5, Բ-ից խմբ. փող 15, Շամ. քղ. խմբ. 27. 79, „Յորդանան" խ. 12. 20, Զաք. Սիր. 30, Օսէֆ 10, „Մաճ" խմբ. 10, Սերոբ Աղբիւր 34, Բ-ից խմբ. փող 25, Ալիշան 22, վիճկ. մնց. 10, Գ.-ից ապառիկ վիճ. 20, Մի խումբ քանւոր. 21. 10, „Վազգ" խմբ. (Ց. Ց. Օ. Ս.) 13. 80, „Տէրոյեան" խ. 60, „Որոտն" խ. 11. 35, Նժոյգեան երեկոյթ 445. 15, ապառիկ վիճ. 12, ապառիկ վիճ. 4, „Մաճ" խ. 12, Մաճի ճիւղ 6, „Սէրբէմճեան" խ. 10. 90։

Ընդամէնը 1130 ռուբլի 4 կոպէկ։

ԴԱՇՏԻ Կոմիտէն՝

Ընկերական հանգանակութիւն 48 ռուբլի, Յատկանիշ՝ երեք ամսավճար 3, Ոսկերիչ մէկ ամսավճարձ, Դրնմից 6, Գերենիկ 10, Ջրկիրներէ 5, արճիճ 5։

ԱՀ. քաղաքի „Արշակունեաց" խմբի 1899 թուից Դիւցազնի մօտ մնացած գումարից ստացւած 50 ռուբլի։ Նոյն քաղաքից հանգանակւած 95 ռուբլի հետեւեալ անձերից՝ Որոտում, Վրէժ, Դրաքտամատ, Աքիւ, Հշխան, Թոշուն, Վառօղ, Վարձօնց, Արծնաքիր, Խոնարհ, Կայծակ, Կրակ Անմեղ, Փանփուշտ, Սուրճ, Զէրբի։

Ընդհանուր գումար 223 ռուբլի։

ՈՍԿԷ-ԽԱՆ՝

Ք. Ք.-ի միջոցով 429 ռուբլի 68 կոպէկ, որ Փարիզ են հետեւեալ անձինք՝ Արիստակէս 100 ռուբլի, մի խումբ կամայք 10, Մայայտ ոմն 50, Մ. Մ. 50, Հռոփանցս 50, Պղատոն 50, Գործարան 25, մի վիճակախաղից Ք.-ի ձեռքով 31. 68, Արծիւ 60, Ոմն իր տատի յիշատակին 3։ Գումար 429 ռուբլի 68 կոպէկ։

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak", Genève (Suisse)